YEREVAN PRESS CLUB

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՄ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Երեւանի մամուլի ակումբի հետազոտությունը
Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի հետ համագործակցությամբ:
Մայիս 2020 - դեկտեմբեր 2021)

Հետազոտության հիմնական նպատակն էր բացահայտել Եվրամիության, ԵՄ անդամ երկրների, որպես ամբողջություն՝ «կոլեկտիվ Արեւմուտքի» նկատմամբ Հայաստանում որոշումներ կայացնողների վերաբերմունքի ու հանրային կարծիքի առաջնորդների ընկալումների դինամիկան՝ Ռուսաստանի վերաբերյալ ընկալումների եւ նրա ինտեգրացիոն նախաձեռնությունների համեմատ: Հետազոտությունը հիմնվել էր հարցաթերթի վրա, որը ներառում էր թեմայի ամենակարեւոր բաղադրիչները եւ հետեւում էր հանրային կարծիքի առաջնորդների ընտրված խմբի («տեղեկատու խումբ») համապատասխան հայտարարություններին լրատվամիջոցներում եւ սոցիալական ցանցերում: Վերաբերմունքի դինամիկան արտացոլելու համար հետազոտությունը բաժանվել է մի քանի առանձնահատուկ ժամանակաշրջանների, երբ իրավիճակի զգայունությունը կարող էր հանգեցնել ընկալումների եւ դիրքորոշումների փոփոխության:

Սույն հետազոտության բովանդակությունը լիովին Երեւանի մամուլի ակումբի պատասխանատվության ներքո է եւ պարտադիր չէ, որ արտահայտի Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի դիրքորոշումը:

Երեւան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ 6

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ.
ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ
ՀՈՒԼԻՍՅԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՇԵՄ
(ՄԱՅԻՍԻ 1 - ՀՈՒԼԻՍԻ 11, 2020) 10

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ.
ԲԱԽՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՐԸ ԵՎ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԼՂ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԱՌԱՋ
(ՀՈՒԼԻՍԻ 12 - ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26, 2020) 18

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ. ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ.
44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ
(ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27 - ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31, 2020) 28

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ.
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ
(ՆՈՅԵՄԲԵՐԻ 10, 2020 - ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31, 2021) 35

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 44

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունը նվիրված է ԵՄ-ի եւ «հավաքական Արեւմուտքի» հանդեպ հայ հասարակության վերաբերմունքի դինամիկայի բացահայտմանը՝ Ռուսաստանի Դաշնության եւ նրա ինտեգրացիոն նախաձեռնությունների համապատասխան ընկալումների հետ համեմատության մեջ: Որոշակի ուշադրություն է հատկացվել նաեւ այլ ազդեցիկ արտաքին դերակատարների վերաբերյալ հնարավոր անդրադարձներին: Որպես այս դինամիկայի ցուցիչ՝ օգտագործվել է հանրային կարծիքի ձեւավորման առումով ազդեցիկ 32 անհատների կողմից ՋԼՄ-ներում եւ սոցիալական ցանցերում տարածված բովանդակությունը, ինչպես նաեւ հասարակության արձագանքը դրան: Վերոհիշյալ 32 անհատներն ընտրվել են ինչպես ծրագրում ներգրավված, այնպես էլ այլ փորձագետների հետ խորհրդակցության արդյունքում: Գոյություն ունեցող կարծիքների եւ ընկալումների պատկերը համակողմանիորեն ցույց տալու համար ընտրված «հարցվողները» (ինչպես հետազոտության մեջ են նշված՝ հանրային կարծիքի առաջնորդները) ներկայացնում են հասարակության չորս պայմանական հատվածներ. ա) նրանք, ովքեր արտացոլում կամ պաշտպանում են Հայաստանի ներկայիս քաղաքական ղեկավարության դիրքորոշումները (նշված են որպես «իշխանամետներ»), բ) նախկին իշխանությունների (1998-2018 թթ.) կողմնակիցները, որոնք պայմանականորեն նշված են որպես «պահպանողականներ», գ) հասարակական գործիչներ, որոնք պաշտպանում են «եվրոպականացման», «արեւմտականացման» գաղափարները («արեւմտամետներ»), դ) դիտորդներ, որոնք ձգտում են անաչառորեն մեկնաբանել/վերլուծել գործընթացները («փորձագետներ»):

Հասարակական հարաբերությունների եւ ընկալումների դինամիկան հետազոտության մեջ ցույց տալու համար դիտարկվող ողջ ժամանակահատվածը (2020թ. մայիսի 1- 2021թ. դեկտեմբերի 31) բաժանվել է չորս փուլի. 1. Հայ-ադրբեջանական սահմանին հուլիսյան բախումներին նախորդող շրջան, 2. Բախման օրերը եւ դրան հաջորդած զարգացումները ԼՂ-ում 44-օրյա պատերազմից առաջ, 3. 44-օրյա պատերազմը Լեռնային Ղարաբաղում, 4. Պատերազմից հետո իրադարձությունների զարգացումը:

Միտումներին լավագույնս հետեւելու համար հետազոտության վերջին փուլն իր հերթին բաժանվել է երեք ժամանակահատվածների, որոնք համապատասխանում էին ներքին եւ արտաքին քաղաքականության առավել կարեւոր զարգացումներին, ինչպիսիք էին արձագանքները հրադադարի վերաբերյալ եռակողմ հայտարարության, արտահերթ ընտրությունների, խաղաղ բանակցությունների մեկնարկի եւ այլնի մասին: «Հարցվողների» դիրքորոշումների համեմատությունն ըստ դրանց սեգմենտացիայի եւ հետազոտության ժամանակային բաժանումների՝ հնարավորություն է տվել բացահայտելու Հայաստանի հասարակական-քաղաքական մթնոլորտի առանձնահատկությունները եւ դրա փոփոխության որոշակի նշանները:

Հետազոտության ընդհանուր եզրակացությունները կարելի է ձեւակերպել հետեւյալ կերպ.

- արտաքին խաղացողների նկատմամբ հասարակության վստահությունը անկման միտում ունի,
- զարգացման հարացույցում առկա է անվտանգության մտահոգությունների գերազանցություն,
- միջազգային համատեքստի վերաբերյալ դիրքորոշումներն ու ընկալումները եղել են ծայրահեղ փոփոխական,
- հայ հասարակության համար հնարավոր արտաքին գործընկերների հետագա նախապատվությունները մեծապես կախված կլինեն Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների հարցում նրանց միջնորդության արդյունավետությունից,
- հանրային կարծիքի այն առաջնորդների դիտարկումները, որոնք ձգտում են անաչառորեն ներկայացնել իրադարձությունների պատկերը, ավելի քիչ են գրավում հայկական լսարանի ուշադրությունը, քան քաղաքական որոշակի օրակարգ ունեցողների կարծիքները:

Հետազոտության առավել կոնկրետ արդյունքները ներկայացված են Համառոտ ամփոփում բաժնում, իսկ մանրամասն արդյունքները՝ ամբողջական Զեկույցում:

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ

20 ամիս (2020թ. մայիսի սկզբից մինչեւ 2021թ. վերջ) ընդգրկող այս հետազոտության չորս փուլերից երեքի շրջանակներում տեղեկատու խմբի օրակարգը գրեթե ամբողջությամբ կենտրոնացած է եղել անվտանգության խնդիրների վրա (հանրային կարծիքի առաջնորդները հանդես էին գալիս տարբեր դիրքերից, սակայն ԶԼՄ-ների եւ սոցիալական ցանցերի միջոցով արտացոլում էին հայ հասարակության տարբեր հատվածների տրամադրությունները)։ Եվ հենց այս համատեքստում են դիտարկվել Հայաստանի հարաբերությունները Եվրամիության եւ այլ արտաքին խաղացողների հետ։ Հետազոտության միայն առաջին՝ Տավուշի մարզում հուլիսյան (2020թ.) ռազմական գործողություններին նախորդող փուլում է, որ հայ-ադրբեջանական հակամարտության թեման եւ դրա հետ կապված հանգամանքները քիչ թե շատ համակցված էին երկրի զարգացման օրակարգի եւ այս գործընթացում Երեւանի գործընկերների դերի հետ, ներառյալ ԵՄ-ն։ Այդուհանդերձ, նույնիսկ ազգային շահերի տեսլականի նման երկվության պարագայում, առաջին տեղում, անվերապահորեն, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի անվտանգության խնդիրներն էին։ Այս հանգամանով է պայմանավորված եղել հայ-ռուսական հարաբերությունների՝ որպես ռազմական ռիսկերի եւ երկրի պաշտպանունակության մակարդակի որոշիչ գործոնի նկատմամբ «հարցվածների» այն չորս կատեգորիաների գերակշիռ ուշադրությունը, որոնց պայմանականորեն բաժանվել էր Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի եւ Երեւանի մամուլի ակումբի համատեղ ծրագրի համար ձեւավորված տեղեկատու խումբը (տե՛ս հետազոտության մեթոդաբանությունը)։ Հենց դա է պատճառը, որ հետազոտության առաջին եւ, առավելապես, հաջորդ փուլերի դիտարկման առարկա դարձած հայտարարություններում, անկախ դրանց հեղինակների քաղաքական կողմնորոշումներից, շեշտը դրվել է տարածաշրջանային անկայունության, Երեւանի եւ Մոսկվայի միջեւ առկա հակասությունների հետ կապված մարտահրավերների, վերջինիս կողմից իր ազդեցության տարբեր լծակների, ներառյալ՝ «հիբրիդային ներգործության» տարրերի օգտագործման վրա (մատակարարվող գազի գին, քարոզչություն եւ այլն)։

2020 թ. հուլիսի կեսերից սկսած՝ գերակշռող են դառնում նաեւ հայ-ադրբեջանական ուղղակի առճակատման, Հարավային Կովկասում Թուրքիայի դերի ակտիվացման եւ, ընդհակառակը, տարածաշրջանի հանդեպ Արեւմուտքի՝ ինչպես ԵՄ-ի, այնպես էլ ԱՄՆ-ի հետաքրքրության նվազման թեմաները։ Համապատասխանաբար, երկրորդ պլանում էր հայտնվել Հայաստանի փոխգործակցությունը Եվրամիության հետ, որի օրակարգում հիմնականում ընդգրկված էին բարեփոխումները երկրի կենսագործունեության տարբեր ոլորտներում, նրա զարգացումը որպես ժամանակակից ժողովրդավարական պետություն։ Նկարագրված իրավիճակի վրա որոշակի ազեցություն ունեցավ նաեւ կորոնավիրուսի համավարակը, ինչը, հայաստանյան իշխանությունների հետեւողականության եւ քաղաքական կամքի բացակայության հետ մեկտեղ խոչընդոտ դարձավ ՀՀ-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացման եւ վիզային ռեժիմի շուրջ երկխոսության առաջընթացի համար։ Միեւնույն ժամանակ, չի կարելի չնկատել հենց պաշտոնական Երեւանի խիստ սահմանափակ

նախաձեռնողականությունը Բրյուսելի հետ համագործակցության եւ համավարակի դեմ պայքարի, «Team Europe» ծրագրին մասնակցության հարցում։

Եթե ուղղակիորեն խոսենք Լեռնային Ղարաբաղի 44-օրյա պատերազմի ժամանակաշրջանի մասին, ապա Հարավային Կովկասում Արեւմուտքի դերի «ապաակտիվացման» կարեւոր գործոնը, ըստ այս հետազոտության արդյունքների, եղել են նաեւ ԱՄՆ-ում նախագահական ընտրությունները, որոնք թե՛ այդ երկրի առաջատար քաղաքական գործիչների, թե՛ միջազգային հանրության ուշադրությունը շեղեցին ամերիկյան հանրապետականների եւ դեմոկրատների սուր առճակատման վրա։ Հետազոտության գրեթե ողջ ընթացքում տեղեկատու խումբը նշել է Ղարաբաղյան հակամարտության վրա միջազգային կառույցների, այդ թվում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ազդեցության թուլացումը։ Հետազոտության արդյունքներով արձանագրված հիմնական հատկանիշներից էր հայ հասարակության անկայունությունը, տրամադրությունների եւ համակրանքների փոփոխականությունը։ Սա արտահայտվել էր ինչպես տարբեր տեսակի սոցիոլոգիական ուսումնասիրությունների, հարցումների արդյունքներում, երբ մի քանի ամսվա ընթացքում այս կամ այն օտարերկրյա պետության նկատմամբ դրական վերաբերմունքը կարող էր գրեթե 80%-ից՝ ավելի քան կիսով չափ իջնել, այնպես էլ այս հետազոտության համար ձեւավորված տեղեկատու խմբի առանձին ներկայացուցիչների՝ ԶԼՄ-ներով եւ սոցիալական ցանցերով տարածված դիրքորոշումներում։ Այս առումով հատկապես հատկանշական էր 44-օրյա պատերազմի շրջանը։ Առաջին օրերին հայրենասիրական վերելք էր նկատվում, գոհունակություն արտահայտվում առ այն, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը երկիրը ինքնուրույն պաշտպանելու վճռականություն էր դրսեւորել։ Ընդ որում, հանրային կարծիքի առաջնորդները, որոնց տեղեկացվածությունը կասկած չպետք է հարուցեր, լայն հանրությանը ոչ մի կերպ չէին հասկացնում, որ հենց այդ ընթացքում հայկական զինված ուժերը հսկայական կորուստներ էին կրում։ Այս մասին քիչ թե շատ ամբողջական տեղեկատվություն լսարանին հասանելի դարձավ միայն մի քանի ամիս անց։ Արդեն ռազմական գործողությունների մեկնարկից մոտ մեկ շաբաթ անց շատ ավելի մեծ նշանակություն էր տրվում զինադադար հաստատելու, Ադրբեջանին եւ Թուրքիային զսպելու ուղղությամբ արտաքին խաղացողների ջանքերին։ Իսկ հիմնական հույսերը կապված էին ոչ թե միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ, Եվրամիություն, ԵԱՀԿ, ՀԱՊԿ), այլ առանձին երկրների՝ առաջին հերթին Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի հետ։ Իսկ պատերազմի ավարտին ավելի մոտ ժամանակահատվածում գնալով սաստկացող թերահավատություն կար իրավիճակի վրա արտաքին ազդեցության արդյունավետության նկատմամբ։ Կարելի է ասել, որ թե՛ այս ընթացքում, թե՛ հետագայում բոլոր միջազգային կառույցներից ու օտարերկրյա պետություններից միայն Ֆրանսիային է հաջողվել պահպանել եւ նույնիսկ ամրապնդել իր հեղինակությունը հայկական տեղեկատվական միջավայրում։

2020 թվականի նոյեմբերի 9-ին զինադադարի մասին եռակողմ (Ադրբեջան, Հայաստան, Ռուսաստան) Հայտարարության ստորագրումից հետո, չնայած երկրի եւ նրա քաղաքացիների անվտանգությանը սպառնացող վտանգների շարունակականությանը, մեդիա դիսկուրսի կիզակետը տեղափոխվեց ներքին քաղաքականություն ոլորտ. դավաճանության մեղադրանքներ եւ հրաժարականի

կոչեր՝ ուղղված Նիկոլ Փաշինյանին, արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու պահանջ, իշխող թիմի հիմնական այլընտրանքի դերի համար մրցակցություն… Ճիշտ է, ընդդիմախոսների փաստարկները հիմնականում վերաբերում էին արտաքին քաղաքական խնդիրներին. Հայաստանի սուբյեկտայնության ամրապնդումը արտաքին աշխարհի հետ արաբերություններում, Ադրբեջանի հետ խաղաղության համաձայնագրերի հեռանկարները, Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը, Լեռնային Ղարաբաղի ապագան, միջազգային գործընկերություն առաջնահերթությունները: Սակայն կարեւորագույն հարցը մնում էր երկրում իշխանության պահպանումը կամ փոփոխությունը՝ որպես խնդիրների լուծման միակ ճանապարհ: 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքները մի փոքր նվազեցրին այս հարցի արդիականությունը: Կոսմետիկ փոփոխությունների ենթարկված ՀՀ ղեկավարությունը շատ շուտով հայտնվեց խորհրդարանական եւ առավել ակտիվ արտախորհրդարանական ընդդիմության քննադատությունների նոր ալիքի խաչաձեւ կրակի ներքո: Առաջինները Նիկոլ Փաշինյանին եւ նրա արտաքին քաղաքականությանը մեղադրում էին Ռուսաստանի հետ ռազմավարական դաշինքից հեռանալու մեջ, իսկ երկրորդներն էլ, ընդհակառակը, քննադատում էին Մոսկվային լիակատար ենթակայության եւ դրսից՝ առաջին հերթին ԱՄՆ-ից եւ ԵՄ-ից (Ֆրանսիայի առանձնահատուկ դերակատարությամբ հանդերձ) եկող եւ երկրի համար նոր հնարավորություններ բացող ազդակներն անտեսելու համար: Ընդ որում, երկու կողմերն էլ, ինչպես եւ ընտրություններից առաջ, համազգային վերածնունդը բացառապես կապում էին Փաշինյանին եւ նրա թիմին իշխանությունից հեռացնելու հետ:

Միայն 2021 թվականի վերջին, երբ տարածաշրջանում հետպատերազմական իրողությունների ուրվագծերը համեմատաբար ավելի պարզորոշ դարձան, արտաքին քաղաքականության բովանդակային բաղադրիչը սկսեց հավասարակշռել ներքին իրավիճակը: Դրան նպաստեցին ինչպես Ռուսաստանի միջնորդությամբ բանակցությունները, այնպես էլ հայ-ադրբեջանական կարգավորման գործում ԵՄ եռանդուն ներգրավվածությունը՝ ի դեմս Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի ակտիվ աջակցությամբ: Այս երկու գործընթացների համադրությունը սույն հետազոտության համար ձեւավորված տեղեկատու խմբի տարբեր հատվածների կողմից խիստ հակասական գնահատականի էր արժանացել: Խորհրդարանական ընդդիմության կողմնակիցները հերթական անգամ դատապարտել էին Փաշինյանին՝ խնդիրների լուծման որոնման ժամանակ Մոսկվային «դավաճանելու» համար՝ «պատժի» վտանգի տակ դնելով Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը: Հետազոտության «հարցվողներից»՝ «արեւմտամետներ» պայմանական կատեգորիան տեղի ունեցողում տեսնում էր Հարավային Կովկասի համար Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ կատաղի մրցակցության նոր դրսեւորում եւ կոչ էր անում խաղադրույք կատարել Բրյուսելի, Փարիզի եւ Վաշինգտոնի նախաձեռնությունների վրա: Եվ վերջապես, երրորդ դիրքորոշումը, որը նկատվում էր «հարցվողների» խմբի մի մասի գնահատականներում, այն էր, որ Մոսկվայի եւ Բրյուսելի դերերը ոչ թե հակասում, այլ լրացնում են միմյանց: Եթե Ռուսաստանն իր ռազմական ներկայությամբ ապահովում է ձեռք բերվող պայմանավորվածությունների «ուժային հիմքը», ապա

ԵՄ-ն իր դիվանագիտական մեթոդներով եւ հնարավոր ներդրումներով խթաններ է ստեղծում հակամարտող կողմերի համաձայնության համար։

Ինչեւէ, Եվրամիության գործնական ներգրավվածությունը Բաքվի եւ Երեւանի միջեւ հետպատերազմյան գործընթացներում, ըստ հայկական լրատվամիջոցների եւ սոցիալական ցանցերի հայկական հատվածի հրապարակումների, Հարավային Կովկասում որոշակի «ինքնամեկուսացումից» դուրս գալու հեռանկարներ էր բացում այս արտաքին խաղացողի համար։ Այս առումով, գոնե առայժմ, ավելի նվազ որոշակիություն կար ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի «Հանուն ժողովրդավարության» գագաթնաժողովից ակնկալիքների առնչությամբ, որին հրավիրված էր նաեւ Հայաստանը։ Այնուամենայնիվ, այս հետազոտության մեջ արձանագրվել են նաեւ կանխատեսումներ տարածաշրջանում ԱՄՆ դերի ակտիվացման մասին (թերեւս, ԵՄ-ի հետ միասին)։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ.

ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ

ՀՈՒԼԻՍՅԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՇԵՄ

(ՄԱՅԻՍԻ 1 - ՀՈՒԼԻՍԻ 11, 2020)

Հայաստանի եւ Ադրբեջանի զինված ուժերի միջեւ Տավուշի մարզում (մայիսի 1-ից հուլիսի 11-ը) հուլիսյան (2020թ.) բախումներին նախորդող ժամանակաշրջանում Եվրոպական միության եւ այլ արտաքին գործընկերների հետ Երեւանի փոխգործակցության թեման, ուսումնասիրված այլ ժամանակաշրջանների համեմատությամբ, բավականին ակտիվորեն արծարծվել է հայկական լրատվամիջոցներում եւ սոցիալական ցանցերի հայկական սեգմենտում:

Մասնավորապես, այն կատեգորիայի անձինք, որոնք այս կամ այն չափով **արտահայտում են պաշտոնական դիրքորոշումը կամ համակրում են ՀՀ իշխանություններին**, ընդգծել են Եվրամիության դրական վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ, թեեւ կորոնավիրուսի տարածումը զգալիորեն նվազեցրել էր փոխգործակցության երկկողմանի շփումների ինտենսիվությունը: Նշվել էր, որ ԵՄ աջակցությունը Արեւելյան գործընկերության շրջանակներում շարունակում է մնալ կարեւոր գործոն երկրի զարգացման համար: Միաժամանակ դժգոհություն է արտահայտվել առ այն, որ վիզային երկխոսություն չի սկսվում, թեեւ Հայաստանում ընդունվել է խտրականության դեմ օրենսդրություն եւ ներդրվել են կենսաչափական անձնագրեր:

Միաժամանակ կարծիք էր հայտնվում, որ Ղարաբաղյան կարգավորման համար պետք է օգտագործել Արեւելյան գործընկերության ձեւաչափը:

Հարկ է նշել, որ «հարցվածների» մի զգալի մասը, որոնք այս հետազոտության շրջանակներում դասվել են «ՀՀ իշխանություններին մոտ» կատեգորիային, պայմանականորեն ասած, արեւմտամետ կողմնորոշում ունեն: Այս միջավայրում կարծիք կա, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ռուսաստանի Դաշնության ղեկավարության համար անընդունելի ֆիգուր է, Մոսկվան նրա դեմ պայքարում է թե՛ Հայաստանում, թե՛ դրանից դուրս քարոզչամեքենայի կիրառմամբ, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական միության, գազի գնի, 2018 թվականին երկրի տապալված իշխանության ներկայացուցիչների («5-րդ շարասյան») կողմից քաղաքական ճնշումների մեխանիզմներով: «Գազպրոմը» եւ երկրում ներկա ռուսական այլ ընկերություններ ընկալվում են որպես Մոսկվայի կայսերական հավակնությունների՝ «Հայաստանի ստրկացման» գործիքներ: Ռուսաստանի նպատակը, ըստ այս կատեգորիայի, Հայաստանի ինքնիշխանության սահմանափակումն է, ինչպես նրա, այնպես էլ ամբողջ Հարավային Կովկասի՝ դեպի ԱՄՆ եւ Եվրամիություն շարժին խոչընդոտելը: Համապատասխանաբար, արտահայտվում էր Երեւանի կողմից բազմավեկտոր քաղաքականության

իրականացման գաղափարը՝ շեշտը դնելով Եվրոպայի հետ ինտեգրացիոն գործընթացների եւ հյուսիսատլանտյան համայնքի վրա։ «Հարցվածների» նույն սեգմենտի շրջանում տարածված էր այն կարծիքը, որ Ռուսաստանի Դաշնության վարկանիշը Հայաստանում անընդհատ նվազում է. որպես փաստարկ՝ բերվում էր Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի 2020 հետազոտությունը։ Եվ որպես դրա հիմնական պատճառներից մեկը՝ նշվում էր Ռուսաստանի կողմից հարձակողական զենքի վաճառքն Ադրբեջանին։

Ընդհանուր առմամբ, «հարցվածների» բոլոր կատեգորիաները շատ ավելի մեծ ուշադրություն են դարձրել Ռուսաստանին, նրա հետ հարաբերություններին, նրա քաղաքականությանը, քան Եվրամիությանը կամ այլ միջազգային դերակատարներին։ Հետազոտության բոլոր փուլերում այս իմաստով ընդգրկված թեմաներից է եղել «Լավրովի պլանը» (հետազոտության օբյեկտներից մեկի խոսքով՝ «տարածքներ՝ ոչինչի դիմաց»), որը, ըստ տարածված կարծիքի, ծառայում է որպես խայծ՝ Ադրբեջանին ԵԱՏՄ-ում ներգրավելու համար։ Միեւնույն ժամանակ, այս հետազոտության արեւմտամետ «հարցվողները» հակված էին ոչ այնքան քննադատելու, օրինակ, Եվրախորհրդարանին ներկայացված զեկույցը Կապան-Հադրութ ճանապարհի կառուցման անընդունելի լինելու վերաբերյալ, որքան մեղադրելու ՀՀ իշխանություններին անարդյունավետ դիվանագիտության համար։ Նույն համատեքստում պետք է դիտարկել այն վարկածը, որ Հայաստանի համար ռուսական գազի գնի բարձրացումից հետո Մոսկվայի խնդրանքով հայկական ռազմական կոնտինգենտի ուղարկումը Սիրիա՝ Երեւանի կողմից «Գազպրոմի» այս քայլի լեգիտիմացումն էր։ ՀՀ իշխանությունների արեւմտամետ կողմնակիցների հնչեցրած «բարեկամական քննադատությունը» ներառում էր նաեւ Նիկոլ Փաշինյանի՝ իշխանության գալուց գրեթե անմիջապես հետո հնչեցրած՝ «իզմերի» (գաղափարական դոկտրինների) ժխտման դիրքորոշումը։ Որպես օրինակ էր բերվել Վրաստանը, որն ընտրելով «իզմը» եւ աշխարհաքաղաքական կողմնորոշումը, միաժամանակ բարեփոխումներ է իրականացրել ԵՄ չափանիշներին առավելագույն մոտարկման հիման վրա եւ արդյունքում ստանում է անհամեմատ ավելի մեծ օգնություն ԵՄ-ից եւ ընդհանրապես Արեւմուտքից, քան Հայաստանը։ Նույն տրամաբանության մեջ պետք է դիտարկել «հարցվածների» այս կատեգորիայի արձագանքը Եվրոպական ժողովրդական կուսակցության նախագահ Դոնալդ Տուսկի աջակցությանը Նիկոլ Փաշինյանին ընդդիմացող քաղաքական ուժերին եւ գործիչներին (հեռացված վարչապետ Սերժ Սարգսյանին եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանին)։ Արտահայտված կարծիքների էությունն այն էր, որ «չի կարելի ո՛չ գերագնահատել, ո՛չ էլ թերագնահատել Դոնալդ Տուսկի հայտարարությունները։ Իշխող քաղաքական ուժը պետք է մտածի իր իմիջի մասին եվրոպական ամենամեծ կուսակցության աչքում»։ Վստահություն էր հայտնվում, որ ոչ ոք չի չեղարկել CEPA-ն (Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիրը), եւ չնայած նախորդ իշխանությունների ներկայացուցիչների բոլոր ջանքերին, Եվրամիությունը շարունակում է շահագրգռված լինել «նոր Հայաստանի» հետ հարաբերությունների ամրապնդմամբ։ Սա ներառում էր Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի եւ Եվրահանձնաժողովի ղեկավար Ուրսուլա ֆոն Լեյենի համատեղ նամակը ՀՀ վարչապետ Փաշինյանին՝ Երեւանում Եվրոպայի օրվա տոնակատարության

կապակցությամբ: Նամակում աջակցություն էր հայտնվում Հայաստանում իրականացվող բարեփոխումներին եւ հավատարմությանը ընդհանուր արժեքներին:

Ավելի արմատական տեսակետներ են հայտնել «հարցվողները», որոնք պայմանականորեն դասվել են **ՀՀ իշխանությունների «արեւմտամետ» ընդդիմախոսների** շարքին: Չնայած քաղաքական ոլորտում համեմատաբար համեստ ներկայացվածությանը, ինչի մասին վկայում են 2021 թվականի հունիսի 20-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքները, այս կատեգորիան բավականին ակտիվ է լրատվական տարածքում: «Արեւմտամետների» միջավայրում ծայրահեղ հավանության են արժանացել մայիսի 7-ին «Ամերիկայի ձայն» ռադիոկայանին տված հարցազրույցում ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի օգնական Ջորջ Քենթի արտահայտած մտքերը: Մասնավորապես, նրա բացասական գնահատականը Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի հայտարարություններին, որը քննադատել էր Երեւանի դիրքորոշումը Ղարաբաղյան կարգավորման հարցում: Քենթի հարցազրույցից հետո արված եզրակացություններից մեկն այն էր, որ Ադրբեջանը պետք է ազատվի Իլհամ Ալիեւից եւ բանակցի Հայաստանի հետ, ապացուցելով, որ դրանք երկու ժողովրդավար պետություններ են, որոնք ազատվել են ռուսական կախվածությունից:

Այս համատեքստում շատ է խոսվել Ռուսաստանի դիրքերի թուլացման եւ նրա ինտեգրացիոն նախագծերի մասին. «Պուտինի վարկանիշն ընկնում է, եւ նա արտաքին քաղաքականության մեջ լուրջ հաջողությունների կարիք ունի՝ Ադրբեջանի ընդգրկումը ԵԱՏՄ-ում եւ ռուսական զորքերի տեղակայումը Արցախում: Բայց Հայաստանը դա թույլ չի տա», «Ղազախստանում եւ Կենտրոնական Ասիայի այլ երկրներում աճում է չինական ազդեցությունը, որն անխուսափելիորեն կհանգեցնի Եվրասիական տնտեսական միության փլուզմանը», «Ռուսաստանի հանրաքվեում «այո»-ի հաղթանակը (սահմանադրական հանրաքվեն Ռուսաստանի Դաշնությունում 2020 թվականի հունիսի 25-ից հուլիսի 1-ը - *ԵՄԱ*) կհանգեցնի «ցարի» տապալմանը: Որքանո՞վ է Հայաստանը պատրաստ իրադարձությունների նման շրջադարձին, կկարողանա՞ ազատվել այն վասալական հարաբերություններից, որոնց գնացել է Լեւոն Տեր-Պետրոսյանը (նկատի ունի ԽՍՀՄ փլուզումից հետո ՀՀ անկախության առաջին տարիները - *ԵՄԱ*)»:

«Հարցվածների» այս կատեգորիայի արմատական դիրքորոշման մասին է վկայում նաեւ այն, որ սոցցանցերի միանգամից մի քանի օգտատերեր կիսվել էին մի հրապարակմամբ, որում հեղինակն ասում է, որ մայիսի 9-ին սովետական կարմիր դրոշով երկնքում պտտվող ինքնաթիռներ տեսնելով զգացել է, որ դրանից ավելի վատ զգացողություններ կարող էին արթնացնել միայն թուրքական եւ ադրբեջանական դրոշները: ԽՍՀՄ-ը մի պետություն է, «որը դարասկզբին մեզ զրկեց անկախությունից եւ մեր հողերը տվեց Թուրքիային, Ադրբեջանին եւ Վրաստանին»: Հաճախ հնչում էին այս կարգի հայտարարություններ. «Արեւելյան Հայաստանում Ռուսաստանի ավելի քան 200 տարվա տիրապետությունը մոտենում է ավարտին: Հայաստանն այլեւս ֆորպոստ չի լինելու: Հայաստանը Ռուսաստանի համար տասնապատիկ ավելի կարեւոր է, քան հակառակը, հետեւաբար, նրա հետ արժանավայել եւ հավասար հարաբերությունները համապատասխանում են Ռուսաստանի ռազմավարական շահերին»: «Ռուսաստանի համար դաշնակիցը «ճորտ» է, հետեւաբար, ՀԱՊԿ եւ

ԵԱՏՄ անդամ Հայաստանի համար, որը միշտ կամակատար կերպով կողմ է քվեարկում Ռուսաստանին, գազը թանկանում է, իսկ Վրաստանի համար, որը հավակնում է անդամակցել ՆԱՏՕ-ին եւ ԵՄ-ին, նվազում է»։

Այս կատեգորիայի կողմից տարածված բովանդակությանը բնորոշ էր Հայաստանի սահմանները վճռող որոշումներով Սեւրի պայմանագրի (1920 թվականի օգոստոսի 10) եւ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի արբիտրաժային վճռի (նոյեմբերի 22, 1920 թ.) հիշատակումը՝ դրանք ներկայացնելով որպես միջազգային իրավական փաստաթղթեր, որոնք պահպանում են իրենց արդիականությունը։ Մասնավորապես, հրապարակվել էր 1925 թվականի քարտեզ՝ ըստ Վուդրո Վիլսոնի (փաստորեն, արդեն իր մահից հետո), որը, գրառման հեղինակի կարծիքով, վկայում է ԱՄՆ-ի կողմից Հայաստանի ճանաչման մասին՝ հենց այդ սահմաններով։ Այս ամբողջ տեղեկատվությունը հակադրվում էր Մոսկվայի դերին. «Հայաստանն ընկալվում է որպես Ռուսական կայսրության ֆորպոստ, իսկ ֆորպոստին չի թույլատրվում զարգանալ։ Երբ որ մենք ամրապնդենք մեր ինքնիշխանությունը, ե՛ւ գազի, ե՛ւ էլեկտրաէներգիայի հարցերը կլուծվեն ժողովրդի շահերից ելնելով, զարգացման հնարավորություններ կհայտնվեն»։

Միեւնույն ժամանակ, հանրային կարծիքի հայ առաջնորդները, հանդես գալով բացահայտ արեւմտամետ, հակառուսական դիրքերից, միանգամայն անվերապահորեն մերժում էին ռուսաֆոբիան։ Նրանք պնդում էին, որ Ռուսաստանի «մեծապետական, գաղութացման» քաղաքականության դեմ իրենց պայքարը չի կարող մեկնաբանվել որպես հակառուսական տրամադրություններ հրահրող, որ հայ-ռուսական հարաբերությունները՝ դրանք ժողովուրդների, այլ ոչ թե «մանր գործիչների» հարաբերություններ են»։ Իսկ Հայաստանի ինքնիշխանության ամրապնդումը ոչ մի կերպ չի հակասում, այլ, ընդհակառակը, ամրապնդում է այդ հարաբերությունները։

Տավուշի հուլիսյան բախումներին նախորդող ժամանակահատվածում այս հետազոտության շրջանակներում **«պահպանողականների»** կատեգորիային պատկանող «հարցվողները» մշտական մտահոգություն են արտահայտել ինչպես Եվրամիության («կոլեկտիվ Արեւմուտքի»), այնպես էլ Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերությունների վատթարացման կապակցությամբ։ Ընդ որում, նրանք հստակ առաջնահերթություն են տվել վերջինիս։ Ավելին, նրանք միանշանակորեն ընդգծել են, որ իշխանության գալու առաջին իսկ օրերից Նիկոլ Փաշինյանը վատթարացնում է հարաբերությունները Ռուսաստանի, ԵԱՏՄ-ի, ՀԱՊԿ-ի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Չինաստանի, Իրանի հետ, որ «այս իշխանությունն ի վիճակի չէ հաջող արտաքին քաղաքականություն վարել»։

Որպես ԵՄ-ի հետ հարաբերություններում առկա պրոբլեմների օրինակ՝ նշվում էր Հայաստանի իշխանությունների նախաձեռնության բացակայությունը՝ կորոնավիրուսի համավարակի հետեւանքով կորուստները վերականգնելու համար էական օգնության փաթեթ ստանալու հարցում («Team Europe»)։ Ուշադրություն էր դարձվում նաեւ դեպի Եվրոպական միության երկրներ հայկական ավիաընկերությունների թռիչքների արգելքին՝ 2020 թվականի հունիսին ԵՄ օդային անվտանգության ցանկում (EU AIR Safety List) դրանց ընդգրկվելու պատճառով։

Ասվում էր այն մասին, որ Եվրախորհրդարանում Արեւելյան գործընկերության հաջորդ գագաթնաժողովի նախապատրաստմանը նվիրված քննարկման ժամանակ Հայաստանի, այդ թվում՝ CEPA-ի եւ վիզային ռեժիմի ազատականացման թեմայի մասին ոչ մի բառ չի ասվել: Եվրախորհրդարանի հատուկ համազեկուցողների կողմից Կապան-Հադրութ ճանապարհի նախատեսվող շինարարության մասին վերոհիշյալ դատապարտումը նույնպես գնահատվում էր, նախեւառաջ, որպես հայկական դիվանագիտության ձախողում: Իսկ այն փաստը, որ Եվրոպական ժողովրդական կուսակցությունը, չնայած մտահոգություն հայտնելով Հայաստանում ժողովրդավարության նահանջի, այդ թվում՝ ընդդիմության վրա ճնշում գործադրելու կապակցությամբ, շարունակել է CEPA-ի շրջանակներում աջակցել Հայաստանին եւ ԵՄ-ի հետ նրա երկկողմ հարաբերություններին, կատարվում է հակառակ իշխանությունների գործողությունների եւ զուտ ընդդիմության արժանիքն է, որը համագործակցում է ԵԺԿ-ի հետ:

Եվրոպական կառույցներում Հայաստանի միակ հարաբերական հաջողությունն այս շրջանում Ռամիլ Սաֆարովի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումն էր: Սակայն «պահպանողականների» պայմանական կատեգորիայի մեջ ընդգրկված նախկին իշխանությունների ներկայացուցիչներն ու կողմնակիցները պնդում էին, որ դա հենց իրենց ձեռքբերումն է, քանի որ ժամանակին իրենք են նախաձեռնել այդ դատական հայցը, այլ ոչ թե նոր կառավարությունը: Բացի այդ, կարծիք էր հնչել, որ ՄԻԵԴ-ի որոշումը չի կարելի լիարժեք հաղթանակ անվանել, քանի որ այն չի նախատեսում Ադրբեջան պետության, հավասարապես նաեւ Հունգարիայի պատասխանատվությունը, որն արտահանձնել էր հայ սպային սպանողին:

Բացի Հայաստանի իշխանություններին եվրոպացի եւ արեւմտյան գործընկերների հետ փոխգործակցության անարդյունավետության համար քննադատելուց, այս կատեգորիայի «հարցվածները» դժգոհում էին նաեւ վերջիններից: Մասնավորապես, նրանց դժգոհությունը հասցեագրված էր Եվրամիության ներկայացուցիչներին այն հայտարարությունների համար, թե Հայաստանում ժողովրդավարական առաջընթաց է գրանցվել: Լուսաբանվեցին Երեւանում ԵՄ պատվիրակության առջեւ տեղի ունեցած ակցիաները եւ բողոքի այլ դրսեւորումները՝ որոնց պահանջն էր արձագանքել ընդդիմության, լրատվամիջոցների եւ նախկին իշխանությունների ներկայացուցիչների քրեական հետապնդումներին: ԱՄՆ դեսպան Լին Թրեյսիի կոչը հայ հանրությանը՝ պատրաստվել խաղաղության, նույնպես բացասական արձագանք ստացավ. նրան առաջարկեցին այդ առաքելությամբ մեկնել Բաքու:

Բայց այս կատեգորիայի մեջ ներառված անձանց հրապարակած բովանդակության հիմնական մասը վերաբերում էր Ռուսաստանի հետ Հայաստանի հարաբերություններին: Անհանգստություն էր արտահայտվել այն կապակցությամբ, որ իշխող քաղաքական ուժը ներքաղաքական պայքարի համատեքստում, ըստ իր ընդդիմախոսների, հակառուսական տրամադրություններ է հրահրում. դա վերաբերում էր թե՛ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, թե՛ ՀԱՊԿ նախկին գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովի, թե՛ այլոց դեմ քրեական գործերին, ինչպես նաեւ Հայկական ատոմակայանում կանխարգելիչ աշխատանքների իրականացման ռուսական պայմանագրից հրաժարվելուն եւ Ռուսական երկաթուղու

դեմ պատժամիջոցներին : Այս համատեքստում համոզմունք էր արտահայտվել, որ Հայաստանի համար աշխարհաքաղաքական շրջադարձն անհնարին բան է, եւ Ռուսաստանի հետ հարաբերություններում առկա խնդիրներն անվտանգության սպառնալիքներ են ստեղծում:

Որպես առանձին դրվագներ, որոնք ՀՀ իշխանությունների նկատմամբ «պահպանողականների» քննադատական վերաբերմունքի նոր հորձանքի առիթ էին դարձել, Փաշինյանի հրաժարումն էր Մոսկվա՝ Հաղթանակի շքերթին մեկնելուց (կար վարկած, որ դա պայմանավորված էր ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ երկկողմանի հանդիպման անհնարինությամբ), հակամարտությունը «Գազպրոմի» հետ, որը Հայաստանի խոշոր գործատուներից, հարկատուներից եւ ներդրողներից մեկն է, Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակված ռեպորտաժը, որտեղ Ռուսաստանում տեղի ունեցած սահմանադրական հանրաքվեի վերաբերյալ գնահատական էր հնչեցնում ընդդիմության առաջնորդ Ալեքսեյ Նավալնին…

Եվս մեկ աշխարհաքաղաքական սխալ էր համարվել 2020 թվականի հունիսին Կրոնի ազատության միջազգային դաշինքին Հայաստանի անդամակցումը, որը դիտվեց որպես «հակաչինական նախաձեռնություն»: Կանխատեսում հնչեց, որ այս քայլով Երեւանը հսկայական վնաս է հասցնում Պեկինի հետ իր չափազանց կարեւոր հարաբերություններին:

Հայաստանի **իշխանությունների կողմնակիցների եւ նրանց գլխավոր քննադատների՝ «պահպանողականների»** հակասությունների արտաքին ասպեկտներին այս կամ այն կերպ առնչվող հիմնական կետերից մեկը դարձավ Սահմանադրական դատարանի շուրջ հակամարտությունը: Առաջինները վստահություն էին հայտնում, որ ՄԻԵԴ-ը չի միջամտի Հայաստանի համար այս սուվերեն խնդրին, որ ՍԴ-ի պրոբլեմը համարժեք է մաֆիայի դեմ պայքարին, եւ Վենետիկի հանձնաժողովին դա հեշտությամբ կարելի է բացատրել: Լրատվամիջոցներում եւ սոցիալական ցանցերում կարելի էր նույնիսկ ծաղրական հայտարարությունների հանդիպել հակամարտությունում «սխալ կողմնորոշված»՝ Վենետիկի հանձնաժողովի նախագահ Ջիանի Բուքիքիոյի եւ ՄԻԵԴ-ի դատավորների հասցեին:

«Պահպանողականները», ընդհակառակը, սատարեցին Եվրախորհրդի գլխավոր քարտուղարի այն հայտարարությանը, թե Հայաստանը Սահմանադրական դատարանի հարցում գործում է Վենետիկի հանձնաժողովի առաջարկությունների դեմ, փոխանցեցին ԵԺԿ-ի մտահոգությունը Երեւանի արձագանքի կապակցությամբ, որ տրվել էր Վենետիկի հանձնաժողովի այդ նույն առաջարկություններին, եւ Կենտրոնամետ դեմոկրատների միջազգային կազմակերպության կոչը ՀՀ իշխանություններին՝ դադարեցնելու իրենց քաղաքականությունը Սահմանադրական դատարանի նկատմամբ: Միաժամանակ նրանք դիմել էին ԵՄ-ի եւ այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին, կարծիք հայտնելով, որ Սահմանադրական դատարանի շուրջ ստեղծված իրավիճակը վնասում է ՀՀ-ԵՄ հարաբերություններին եւ Հայաստանում եվրոպական արժեքների առաջընթացին:

Երկու հիմնական ընդդիմախոսների միջեւ բուռն քննարկումների մեկ այլ պատճառ էր դարձել ՀՀ Ազգային ժողովի կողմից «Սեռական շահագործումից եւ սեռական

բռնությունից երեխաների պաշտպանության մասին» կոնվենցիայի վավերացումը (Լանսարոտեի կոնվենցիա)։ Իշխանությունների կողմնակիցները, որոնք ողջունում էին վավերացումը, Հայաստանում երեխաների նկատմամբ սեռական բռնության օրինակներ էին բերում, նախորդ իշխանությունների ներկայացուցիչներին «տրոլինգի» էին ենթարկում այն վարկածով, որ իբրեւ թե նրանք ժամանակին չեն միացել կոնվենցիային, քանի որ իրենց վարչապետի խորհրդականը մանկապիղծ է եղել։ Իրենց հերթին, ներկայիս իշխանությունների հակառակորդները պնդում էին, որ Լանսարոտեի կոնվենցիայի վավերացումը սպառնալիք է ներկայացնում ավանդական ընտանեկան արժեքների համար։

Վերոնշյալ թեմայի քննարկումը հաճախ միահյուսվում էր իշխանությունների կողմնակիցների եւ «պահպանողականների» փոխադարձ մեղադրանքներով՝ «հինգերորդ շարասյան» ջրաղացին ջուր լցնելու համար։ Առաջիններն ակտիվորեն տեղեկատվություն էին տարածում նախորդ իշխանությունների հետ կապված մի շարք կազմակերպությունների արտաքին ֆինանսավորման եւ Հայաստանի ինքնիշխանությունը խաթարելու, ժողովրդավարական բարեփոխումների իրականացմանը խոչընդոտելու մասին։ Նրանց ընդդիմախոսներն էլ պնդում էին, որ արեւմտյան փողերը, որոնք օգտագործվում են «ճորտատիրական հասարակական կազմակերպություններ» ստեղծելու եւ գործարկելու համար, սպառնում են ազգային անվտանգությանը։ Նրանք հետեւողականորեն հանրային դիսկուրս էին ներմուծում «Սորոսի» կարծրատիպը եւ զբաղված էին իշխանության կառույցներում այդպիսիների որոնմամբ։

Թաքնված աշխարհաքաղաքական երանգավորում ունեցող մեկ այլ թեմա էլ կորոնավիրուսի մասին քննարկումն էր։ Իշխանությունների կողմնակիցները բացահայտել էին կորոնավիրուսի, դրան հակազդելու միջոցների, պատվաստումների մասին ապատեղեկատվության տարածման դեպքերը՝ դա համարելով արտաքին ուժերի միջամտություն եւ ԱԱԾ-ից պահանջելով հետաքննել նման նախադեպերը։ Մասնավորապես, նման գործունեության մեջ մեղադրվում էին նախկին իշխանության ներկայացուցիչները եւ նրանց հովանավորները Ռուսաստանում։

Վերջապես, այս հետազոտության իրականացման համար սահմանված չորրորդ պայմանական կատեգորիան **«փորձագետներն»** էին, որոնց տեղեկատվական նախապատվություններն ու գնահատականները, ինչպես եւ ակնկալվում էր, հիմնականում բխում են թեմայի իմացությունից, այլ ոչ թե համակրանքներից եւ հակակրանքներից։ Այս կատեգորիայի ներկայացուցիչներն հետազոտության առաջին փուլում կենտրոնացած էին Հայաստանի ինքնիշխանության թեմայի վրա։ Մասնավորապես, նրանք վերլուծության էին ենթարկել դրա վրա ազդող արտաքին գործոնները։

Այսպես, նրանց կարծիքով, ռուսական գազի մատակարարումները Հայաստանի ինքնիշխան հավակնություններին հակազդելու կարեւոր գործիք են։ 2013-ի «գազային պայմանագիրը», որը դարձավ Հայաստանին Եվրամիության հետ Ասոցացման համաձայնագրից հրաժարվելու «պարտադրանքի գործողության» շարունակությունը, Երեւանին զրկեց երկրին «կապույտ» վառելիքով ապահովելու

որեւէ անկախությունից։ Նույն համատեքստում պետք է դիտարկել նաեւ 2020 թվականին ռուսական գազի գնի բարձրացումը։

20-րդ դարի առաջին կեսի նշանավոր ազգային գործիչ Գարեգին Նժդեհի թեման՝ որպես ֆաշիստական Գերմանիայի հետ համագործակցողի, մի շարք հայ փորձագետների դիտարկմամբ, նույնպես ակտիվացվում է դրսից (այս դեպքում՝ Ռուսաստանից եւ Ադրբեջանից), երբ անհրաժեշտություն է ծագում սահմանափակելու Հայաստանի ինքնիշխանությունը. Այդպես եղավ նաեւ 2020-ին։

Համոզմունք էր հայտնվել, որ հայ-ռուսական հարաբերությունների քննարկման հիմնական առարկան պետք է լինի անկախությունը, այլ ոչ թե աշխարհաքաղաքական կողմնորոշումը։ Հենց որ երկիրը ներքաշվել է Ռուսաստան - Արեւմուտք (որ կողմից էլ որ լիներ) առճակատման մեջ, վճարել է ինքնիշխանությամբ։ Հայաստանը չպետք է լինի նման առճակատման կողմ։

Այս առումով հատկանշական է «փորձագետների» կատեգորիայի ներկայացուցիչներից մեկի եզրակացությունը. «Հայաստանում ներքաղաքական պայքար չի եղել։ Ըստ էության, իրականում եղել է պայքար ինքնիշխանության եւ դրա դեմ մեծ տերությունների ոտնձգությունների միջեւ»։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ.

ԲԱԽՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՐԸ ԵՎ

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԼՂ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԱՌԱՋ

(ՀՈՒԼԻՍԻ 12 - ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26, 2020)

Անվտանգության խնդիրների վրա այս ընթացքում հասարակության **ուշադրության կենտրոնացման պատճառով** Հայաստանի եւ Եվրամիության համագործակցության թեման մնացել էր համեմատաբար երկրորդ պլանում: Ավելին, այս հետազոտության համար ընտրված տեղեկատու խմբի ներկայացուցիչները դրան ավելի քիչ էին անդրադառնում, քան նախորդ փուլում: Ինչ վերաբերում է Հայաստանի համար առաջնահերթ խնդիրներում միջազգային հիմնական խաղացողների դերին, ապա Ռուսաստանն ավելի շատ էր ուշադրության կենտրոնում, քան նախորդող ավելի քան երկու ամիսների ընթացքում:

Ինչպես հետազոտության առաջին փուլում, այնպես էլ այս շրջանում արտաքին քաղաքականությանն ու անվտանգությանն առնչվող հարցերում արձանագրվել է երկու պայմանական կատեգորիաները ներկայացնող «հարցվողների» դիրքորոշումների որոշակի նմանություն. մի կողմից **սատարում են վարչապետ Նիկոլ Փաշինյանին** եւ նրա թիմին, մյուս կողմից՝ **«արեւմտամետ» հայացքներ ունեն**:

Երկուստեք մեծ կարեւորություն են տվել ընդհանուր առմամբ Եվրամիության հետ համագործակցությանը, մասնավորապես՝ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շրջանակներում: Ընդգծվել է ԵՄ կողմից Երեւանին GSP+ առեւտրային ռեժիմի տրամադրման կարեւորությունը, որը զգալի մաքսային արտոնություններ էր նախատեսում հայկական ապրանքների ներմուծման համար: Ինչպես մոնիտորինգի առաջին, այնպես էլ այս փուլում նշվել է Եվրամիության պոտենցիալ դերը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բանակցային գործընթացում: Միեւնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության եւ ԵՄ-ի միջեւ երկկողմ հարաբերությունների օրակարգի հետ կապված կոնկրետությունը գրեթե բացակայում էր:

Այս ընթացքում, թեեւ շատ համեստ, բայց արձագանքներ են արձանագրվել ՀՀ-ում ԵՄ նախկին դեսպան Պյոտր Սվիտալսկու «Հայկական հեղափոխություն. անավարտ շղթա» գրքի հրապարակմանը, որը շատերի կողմից ընկալվել է որպես Հայաստանի նկատմամբ եվրոպական արտաքին քաղաքականության արտացոլում: Եթե համաձայնենք այս մեկնաբանության հետ, ապա Բրյուսելը սատարել է «թավշյա հեղափոխությանը» եւ նոր իշխանություններին: Միաժամանակ, Նիկոլ Փաշինյանի կողմնակիցները հերքել են այն տեսակետը, թե ԵՄ-ի հետ համագործակցության

շահագրգռվածությունն իրենց քաղաքական զինակիցների համար նշանակում է ԵԱՏՄ-ից եւ ՀԱՊԿ-ից հրաժարվելու կուրս։

Տավուշի ռազմական գործողությունների համատեքստում ՀԱՊԿ-ի դերը դարձել էր «հարցվածների» բոլոր կատեգորիաների, այդ թվում՝ **իշխանությունների կողմնակիցների եւ քաղաքական գործիչների, արեւմտյան կողմնորոշում ունեցող վերլուծաբանների** ուշադրության առարկան։ Այս երկու կատեգորիաները պաշտպանում էին պաշտոնական Երեւանի դիրքորոշումը. «Մենք ՀԱՊԿ-ի կողմից որեւէ աջակցության կարիք չունենք, ինքներս գլուխ կհանենք։ Եթե հետագայում ինչ-որ խնդիր առաջանա, այդ ժամանակ մենք կարող ենք խոսել բազմակողմ մակարդակում՝ ինչ ենք ակնկալում եւ ումից»։ Սակայն Ռուսաստանի եւ նրա ղեկավարած անվտանգության համակարգի վերաբերյալ այս երկու կատեգորիաների ներկայացուցիչների հայտարարությունների տոնայնությունն իրենց սրությամբ տարբեր էին։

Առաջիններն ընդգծում էին այն թեզը, որ, ի տարբերություն ՀՀ նախկին ղեկավարի՝ Սերժ Սարգսյանի, Վլադիմիր Պուտինը չի կարող Փաշինյանին հրամայել՝ չպատասխանել Ադրբեջանի ագրեսիային եւ դուրս բերել զորքերը (ենթադրվում էր, որ 2016 թվականի Քառօրյա պատերազմի ժամանակ Ռուսաստանը հետ է պահել Հայաստանին)։ Հիմա՝ հուլիսյան իրադարձություններից հետո, նրանք դրական միտումներ էին տեսնում հայ-ռուսական հարաբերություններում եւ Հայաստանի նկատմամբ ՀԱՊԿ-ի վարքագծի մեջ՝ որպես այս կազմակերպության պատասխանատվության տարածքի մաս։ Նշվում էր, որ Ռուսաստանի Դաշնությունը եւ Հայաստանի Հանրապետությունը բազմաթիվ համընկնող շահեր ունեն հարավկովկասյան տարածաշրջանում, եւ կողմերը շարունակում են փոխշահավետ համագործակցությունը։

Երկրորդները («արեւմտամետները») ավելի կտրուկ էին արտահայտվում. միջազգային հարաբերությունների այն սուբյեկտները, որոնց Ռուսաստանը համարում կամ հայտարարում է «թշնամի», պարտադիր չէ, որ մեզ համար էլ այդպիսին լինեն։ Մասնավորապես, Հայաստանը պատճառ չունի հարաբերությունները փչացնելու Եվրամիության, ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Հնդկաստանի, Չինաստանի, Կանադայի եւ այլոց հետ։ Ընդհակառակը, բոլոր հիմքերը կան այդ հարաբերություններն ամրապնդելու եւ ընդլայնելու համար, եւ Ռուսաստանը ստիպված է հաշվի նստել Երեւանի ընտրության հետ, անկախ նրանից՝ դա իրեն դուր է գալիս, թե ոչ։

«Հարցվածների» **վերոնշյալ երկու կատեգորիաներն էլ** ընդունել են Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Ռուսաստանի, ԵԱՀԿ-ի եւ, մասնավորապես, Մինսկի խմբի համանախագահների համատեղ ջանքերի կարեւորությունը՝ տավուշյան բախումների հետեւանքով առաջացած լարվածությունը նվազեցնելու հարցում։ Կրկին արդիականացել էր 2016 թվականի Ապրիլյան պատերազմից հետո բանակցություններում հիմնականներից մեկը դարձած՝ հայ-ադրբեջանական սահմանին եւ Լեռնային Ղարաբաղի շփման գծում ԵԱՀԿ-ի մոնիտորինգի թեման։ Ամերիկացի եւ եվրոպացի ճանաչված պաշտոնյաների, քաղաքական գործիչների, հայտնիների (մասնավորապես՝ Քիմ Քարդաշյանի) կոչերը՝ Ադրբեջանի կողմից նոր

ռազմական գործողությունների սպառնալիքի պայմաններում Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի անվտանգությունն ապահովելու միջոցներ ձեռնարկելու մասին, պարբերաբար եւ լայն լուսաբանում ստացան։ Բարձր գնահատվեց Ադրբեջանին ռազմական օգնություն տրամադրելու դեմ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի անդամներ Բրեդ Շերմանի եւ Ֆրենկ Փալոնի օրենսդրական նախաձեռնությունը։ Միաժամանակ նշվել էր, որ Ջորջ Բուշ - Կրտսերի նախագահությունից հետո պաշտոնական Վաշինգտոնը սկսել է նվազեցնել իր ակտիվությունը Հարավկովկասյան տարածաշրջանի եւ, մասնավորապես, Ղարաբաղյան խնդրի առնչությամբ։

Պայմանական «արեւմտամետները» հարց բարձրացրին՝ արդյո՞ք ՀԱՊԿ գոյություն ունի։ Եթե հիմա ԵԱՏՄ-ն ու ՀԱՊԿ-ը չեն արձագանքում, ուրեմն մեր ու նրանց ճանապարհները տարբեր են։ Թե՛ ՄԱԿ-ը, թե՛ ԱՄՆ-ը, թե՛ ԵՄ-ն, թե՛ ԵԱՀԿ Մինսկի խումբը արձագանքեցին սրացմանը, իսկ ՀԱՊԿ-ը պարտավոր էր հայտարարություն անել հօգուտ Երեւանի, բայց նույնիսկ այդ թեմայով հանդիպումը չեղարկեցին։ Հուլիսյան դեպքերի հիման վրա եզրակացություն էր արվում Նախիջեւանում Թուրքիայի հետ համատեղ զորավարժություններից հետո Ադրբեջանի հավանական արկածախնդրության մասին։ Ենթադրվում էր, որ ՀԱՊԿ-ը չի կատարի իր պարտավորությունները, իսկ Ռուսաստանը կհետաձգի զենքի ծրագրված մատակարարումը, քանի որ Ադրբեջանին հարձակման կանաչ լույս է տվել։ Ռուսաստանը նպատակ ուներ ստիպել Հայաստանին՝ հրաժարվել Լեռնային Ղարաբաղի շուրջ վերահսկվող տարածքներից։ Ուստի Հայաստանը պետք է օգնության համար դիմեր ԱՄՆ-ին, Ֆրանսիային եւ Հունաստանին։ «Հարցվածների» այս կատեգորիան ողջունել էր ԱՄՆ Կոնգրեսի որոշումը՝ աջակցել Արցախին ականազերծման հարցերում։ Բարձր էր գնահատվել «Halo Trust» կազմակերպության գործունեությունն այս ուղղությամբ։

Միաժամանակ, ուշադրություն է գրավում նոր հանգամանքներում Կոսովոյի խնդրի հիշատակումը եւ դրա համեմատությունը Ղարաբաղյան խնդրի հետ։ Հարկ է նշել, որ դա այս հետազոտության շրջանակներում հազվադեպ, բայց հատկանշական էր Հայաստանում Արեւմուտքից եւ Ռուսաստանից ունեցած հանրային ակնկալիքների մասին ամբողջական պատկերացում կազմելու համար։ Ընդգծվում էր, որ Կոսովոն տարածքային առումով Եվրոպայի անբաժանելի մասն է, հետեւաբար ԱՄՆ-ը եւ ԵՄ-ն շատ ավելի մեծ չափով, քան Լեռնային Ղարաբաղի դեպքում, շահագրգռված էին կարգավորմամբ։ Հենց Սերբիան հաղթահարի իր հակասությունները Վաշինգտոնի եւ եվրոպական մայրաքաղաքների հետ, Ռուսաստանը վերջնականապես կկորցնի իր ազդեցության զգալի լծակները Բալկաններում։ Բայց Լեռնային Ղարաբաղի հարցում, չնայած Մինսկի խմբի այլ համանախագահների ներկայությանը, Մոսկվան մնում է որպես հիմնական խաղացող։

ՀԱՊԿ-ի թեմայի վրա կենտրոնացումը պատճառ դարձավ այս կազմակերպության առաքելությունն ու կանոնակարգը համեմատելու այդօրինակ կառույցների գործունեության հետ։ Մասնավորապես նշվում էր, որ իրեն ռազմական դաշինք հռչակող ՀԱՊԿ-ն իրականում այդպիսին չէ, քանի որ պայմանագիրը չի պարունակում ՆԱՏՕ-ի 5-րդ հոդվածի կամ Վարշավայի պայմանագրի 4-րդ հոդվածի

անալոգը, որոնք այդ կազմակերպության անդամներից մեկի վրա հարձակումը դիտարկում են որպես հարձակում բոլորի դեմ:

Սոցցանցերում քննարկվող մեկ այլ թեմա էլ վերաբերում էր Լեռնային Ղարաբաղը սեփական վերահսկողության տակ վերցնելու Ռուսաստանի Դաշնության ծրագրերին: Պատճառներից մեկը «Ռեգնում» լրատվական գործակալության կայքում հոդվածի հրապարակումն էր, որտեղ առկա էր հետեւյալ կարծիքը. «Ռուսամետ Ղարաբաղը Ռուսաստանին շատ ավելի ձեռնտու կլինի, քան Հայաստանում գտնվող ռազմաբազան: Սա հասկանում են Երեւանում, ուստի խոսակցությունները, թե 102-րդ ռազմաբազան պետք է դուրս բերվի, մարել են: Ավելին, քչերն են հավատում, որ այդ բազայի առկայությունն ավելի ձեռնտու է Ռուսաստանին, քան Հայաստանին: Եթե Մոսկվան իր ողջ ուշադրությունն ուղղի դեպի Լեռնային Ղարաբաղ, Հայաստանը ստիպված կլինի վերանայել իր շեշտադրումները եւ մի փոքր խախտել հավասարակշռությունը»:

Պայմանականորեն արեւմտամետ կողմնորոշում ունեցող «հարցվածներն» անդրադարձել էին Երեւանի վրա Մոսկվայի ճնշման եւ Ռուսաստանի ազդեցության ուժեղացման հետեւանքներին: Մասնավորապես, նրանց հետաքրքրում էր, թե ինչու են Հայաստանի իշխանություններն աչք փակում Հարավկովկասյան երկաթուղու («Ռուսական երկաթուղիներ» ընկերությանն ամբողջությամբ պատկանող դուստր ձեռնարկություն) գործունեության ոլորտում չարաշահումների վրա, որը սկսել էին հետաքննել 2018թ. «թավշյա հեղափոխությունից» գրեթե անմիջապես հետո:

Տավուշում ռազմական գործողությունների ավարտից եւ դրանից մի քանի օր հետո ուշադրության կենտրոնում էր հայտնվել ԱՄՆ-ում, Եվրոպայում եւ Ռուսաստանում ադրբեջանցիների կողմից բռնությունների եւ այլ հակահայկական գործողությունների հարցը: Այսպես, ե՛ւ «իշխանամետ», ե՛ւ «արեւմտամետ» «հարցվածները» նշել էին, որ եթե Ռուսաստանի իրավապահ մարմինները քրեական պատասխանատվության չենթարկեն «ՖուդՍիթի» շուկայի կառավարիչներին՝ հայ մատակարարների նկատմամբ ազգային հիմքով խտրականության համար, ակնհայտ կդառնա, որ վերջիններս գործել են Կրեմլի անմիջական թողտվությամբ:

«Հարցվածների» նշված երկու կատեգորիաների շրջանում էլ վրդովմունքի ալիք էր առաջացրել «Ռոսիա սեգոդնյա» գործակալության գլխավոր խմբագիր Մարգարիտա Սիմոնյանի գրառումը, որի իմաստն այն էր, որ այսօրվա Հայաստանն արժանի չէ Ռուսաստանի աջակցությանը: Ըստ որում, նշվել էր այն փաստը, որ այս գրառումը սկզբում հայտնվել, իսկ հետո հանվել էր ՀԱՊԿ կայքից՝ հայտարարությամբ, որ տվյալ գրառումը հակասում է կազմակերպության դիրքորոշմանը: Սակայն կարծիք հնչեց, որ ՀՀ ԱԳՆ-ն պետք է պարզաբանումներ պահանջի Մարգարիտա Սիմոնյանի հայտարարությունների առնչությամբ, վերջինիս՝ ռուսական խոշորագույն պետական մեդիա խմբի ղեկավարներից մեկի կարգավիճակի պատճառով: Այսպիսով, «արեւմտամետ» «հարցվածները» հորդորում էին. «Մի՛ մոռացեք, որ Սիմոնյանը Կրեմլի խոսափողն է: Ուստի, հարկավոր է ճիշտ հասցեագրել դժգոհությունը»:

Այս հետազոտության **երկրորդ փուլով ընդգրկված ժամանակահատվածում** էր, որ ամենայն սրությամբ եւ ինտենսիվությամբ սկսեցին քննարկվել Թուրքիայի՝ որպես

Հարավային Կովկասի գործընթացների վերաբերյալ որոշումների կայացմանն անմիջականորեն ներգրավված դերակատարի հավակնությունների մասին պնդումները: Հայաստանի ԶԼՄ-ների եւ սոցիալական ցանցերի հայկական հատվածի համապատասխան դիսկուրսի մասնակիցները համառորեն կրկնում էին, որ Մինսկի խումբը միակ ձեւաչափն է, որը նախատեսված է լուծելու Ղարաբաղյան հակամարտությունը: «Արեւմտամետ» «հարցվողներն» իրենց դիրքորոշումը կտրականապես հակադրում էին նրանց, ովքեր կարծում էին, որ Ռուսաստանի եւ Թուրքիայի փոխգործակցությունը կարող է դառնալ տարածաշրջանի խնդիրների լուծման եւս մեկ արդյունավետ ռեսուրս: Միեւնույն ժամանակ, պաշտոնական Երեւանի հանդեպ ավելի լոյալ դիրքորոշմամբ հանրային կարծիքի առաջնորդները ենթադրություններ էին հրապարակում, որ, ի տարբերություն Ղարաբաղյան հակամարտության գոտում անցյալի սրացումների, Տավուշի հուլիսյան ռազմական գործողություններից հետո Մոսկվան հստակ կերպով կհայտարարի իր առաջնահերթությունների մասին եւ թույլ չի տա ապակայունացում տարածաշրջանում, քանի որ Հայաստանը ՀԱՊԿ շրջանակներում իր գործընկերն է: Միաժամանակ, բազմիցս հնչել է Թուրքիային ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամությունից հեռացնելու պահանջ:

Հենց Տավուշի հուլիսյան իրադարձությունների համատեքստում էր, որ **հայաստանյան հանրային կարծիքի առաջնորդների ճնշող մեծամասնությունը** սկսեց կենտրոնանալ Անկարայի վրա՝ որպես տարածաշրջանում Եվրամիության եւ Միացյալ Նահանգների շահերին հակասող գործոնի: Հաշվի առնելով ՆԱՏՕ-ից, ԵՄ-ից եւ ԱՄՆ-ից հեռացող Թուրքիայի հիպերակտիվությունը՝ համոզմունք էր արտահայտվում, որ Հայաստանը պետք է նոր, ներկայիս իրողություններին համապատասխանող անվտանգության երկխոսություն սկսի ինչպես Ռուսաստանի, այնպես էլ ԱՄՆ-ի (երկկողմ ձեւաչափով եւ ՆԱՏՕ-ի շրջանակներում) եւ Հյուսիսատլանտյան դաշինքի եվրոպացի շահագրգիռ անդամների հետ: Իսկ Հունաստան-Կիպրոս տանդեմի, Եգիպտոսի, Իսրայելի եւ մի շարք այլ երկրների հետ հարաբերությունները պետք է դրվեն նոր՝ անվտանգության եւ պաշտպանության հարթության վրա: Տավուշյան դեպքերի արդյունքների հիման վրա կանխատեսում հնչեց, որ Անկարան (քանզի հենց Թուրքիան էր համարվում սրման մեջ ամենաշատ շահագրգիռ կողմը) ժամանակավորապես հեռացվել է եւ չի նախաձեռնի իր նկատմամբ Եվրամիության «սրտխառնոցը» սրող քայլեր:

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ Հարավային Կովկասի գործերին միջամտելու համար մեղադրանքների թեման քննարկվել է հայ-ռուսական հարաբերությունների, ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության եւ ՀԱՊԿ-ի հետ սերտ առնչությամբ: Այս հետազոտության շրջանակներում որպես «արեւմտամետ» դասակարգված «հարցվողներից» մեկն այսպիսի կարծիք էր հայտնել. «Թուրքիայի հանդեպ վախերը (երբեմն արդարացված) Հայաստանին հանգեցրել են ինքնիշխանության հարցում հետեւողական փոխզիջումների՝ ռուսական բազա անշահավետ պայմաններով, Ռուսաստանի Դաշնությանը փոխանցված գույք պարտքի դիմաց, 1999 թվականի հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունը եւ 2008 թվականի մարտի 1-ի բողոքի ակցիայի զնդակահարումը, ՀԱՊԿ կանոնադրության ամոթալի փոփոխությունները, որոնց հետեւանքով

Հայաստանը կորցրեց իր բացառիկ վերահսկողությունը սեփական տարածքի նկատմամբ եւ հնարավորություն տվեց Մոսկվային՝ միջամտել իր ներքին գործերին»։

Արդեն 2020 թվականի հուլիսին Տավուշում տեղի ունեցած ռազմական գործողություններից հետո հայկական տեղեկատվական տարածքում սկսեց քննարկվել թուրքական արտադրության ապրանքների ներկրման արգելքների եւ դրանք սեփական կամ այլ ներկրողներով փոխարինելու թեման։ Ճիշտ է, կասկածներ հնչեցին նման արգելքի իրագործելիության վերաբերյալ, քանի որ, դառնալով ԵԱՏՄ անդամ, Հայաստանը կորցրել է լիիրավ ինքնիշխանությունը նման միջոցների արդյունավետ կիրառման համար։ Թերեւս, ինչպես նշում էին այս հետազոտության տեղեկատու խմբի ներկայացուցիչները, Երեւանը կարող էր հանդես գալ անհեռանկար նախաձեռնությամբ, որ Եվրասիական տնտեսական միության անդամ բոլոր երկրները հրաժարվեն թուրքական ապրանքներից…

Հայկական տեղեկատվական տարածքում առանձին քննարկման թեմա էր **ռուսական մամուլի ապակառուցողական դերը**, որն ակտիվորեն տարածում էր ապատեղեկատվություն եւ տիրաժավորում ֆեյքերը։ Ավելին, այն բավականին հաճախ Տավուշի հուլիսյան սրացման շուրջ ստեղծված իրավիճակը ներկայացնում էր Ադրբեջանի տեսանկյունից։ Եվ դա՝ չնայած այն հանգամանքին, որ հայկական կողմը նաեւ շուրջօրյա ռեժիմով Ռուսաստանին փոխանցում էր տեղում իրադարձությունների զարգացման մասին տեղեկատվության ողջ ծավալը։ Ռուսական առաջատար լրատվամիջոցներից շատերը պարզապես անտեսեցին Հայաստանի հաղորդագրությունները, թեեւ լուսաբանումը հավասարակշռված էր տարբեր աղբյուրների օգտագործմամբ։ Անմիջապես 2020 թվականի հուլիսի 12-14-ին (ռազմական գործողությունների օրերին), ըստ հայ հետազոտողների, Տավուշի օպերատիվ իրավիճակի մասին ռուսական լրատվամիջոցների մոտ 80%-ը հիմնված է եղել ադրբեջանական աղբյուրների վրա։ Ապատեղեկատվության օրինակներից մեկն այն էր, որ Հայաստանն իբրեւ թե դիմել էր ՀԱՊԿ-ի օգնությանը, թեեւ դա իրականությանը չէր համապատասխանում։ Միեւնույն ժամանակ, «արեւմտամետ» «հարցվածները» ռուսական լրատվամիջոցների պահվածքին հակադրել էին տեղեկատվական դաշտում եվրոպական ամենահեղինակավոր խաղացողների, մասնավորապես՝ բրիտանական BBC-ի ավելի պրոֆեսիոնալ աշխատանքը։

Հետազոտության այս փուլում հայ-ռուսական հարաբերությունների մեկ այլ գրգռիչ հանգամանք էր «Գազպրոմի» մտադրությունը՝ բարձրացնել գազի գինը հայ սպառողների համար։ Այն ծանր իրավիճակում, որն այդ պահին ստեղծվել էր Հայաստանում, շատերի կողմից սա ընկալվեց որպես իրենց նկատմամբ Ռուսաստանի հերթական ոչ բարեկամական քայլ։ Ռուսական ընկերության այս մտադրությունը խթանեց Եվրամիության աջակցությամբ էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործման, ինչպես նաեւ Իրանից գազի մատակարարումների մասին խոսակցությունների ակտիվացումը։

«Պահպանողականների» պայմանական կատեգորիան ներկայացնող «հարցվածները», կարեւորելով հարաբերությունները թե՛ Եվրամիության, թե՛ Ռուսաստանի հետ, նշել էին Նիկոլ Փաշինյանի եւ նրա կառավարության հեռացումը նախկին ձեռքբերումներից։ Մասնավորապես, կարծիք էր հնչել, որ ԵԱՏՄ-ի, ԵՄ-ի, ՆԱՏՕ-ի,

Իրանի հետ հարաբերությունների մակարդակի համար նոր իշխանությունները պետք է երախտապարտ լինեն Սերժ Սարգսյանի թողած ժառանգությանը: Այդ թվում, 2017 թվականին վերջնականապես համաձայնագիր էր ստորագրվել ԵՄ «HORIZON 2020» ծրագրին Հայաստանի մասնակցության մասին, ինչը շատ կարեւոր էր երկրում գիտության զարգացման համար:

Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերությունների վերաբերյալ բերվում էր Մոսկվայի Կարնեգի կենտրոնի փորձագետ Դմիտրի Տրենինի կարծիքը, որը համարում էր, որ Հայաստանը Ռուսաստանին վերաբերվում է որպես սպառող, եւ եթե իրավիճակը չփոխվի, Երեւանը կդադարի վստահելի գործընկեր լինել Մոսկվայի համար: Ռուսական քաղաքական վերնախավի հետ նորմալ հարաբերությունների դեպքում Հայաստանի ղեկավարությունը նախապես տեղյակ կլիներ Վլադիմիր Պուտինի՝ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ շփումների բնույթին եւ բովանդակությանը, դրանց հնարավոր հետեւանքներին Հայաստանի եւ ԼՂ անվտանգության համար: Այն, որ Ռուսաստանը չի ցանկանում նախապատվությունը տալ Հայաստանին՝ որպես ռազմավարական դաշնակցի, ավելի ցածր ռազմավարական գործընկերության կարգավիճակ ունեցող երկրի՝ Ադրբեջանի նկատմամբ, որ ռուս-թուրքական հարաբերություններն Անկարային թույլ են տալիս ավելի ու ավելի կարեւոր դեր խաղալ Հարավային Կովկասում, այն, որ Նախիջեւանում թուրք-ադրբեջանական զորավարժություններին հակադրելու ոչինչ չկա, այս ամենը Երեւանի անհեռատես քաղաքականության արդյունքն էր: Մոսկվայում արմատավորվել է Հայաստանի իշխող վերնախավի հակառուսական բնույթի գաղափարը, իսկ Ադրբեջանի հետ Ռուսաստանի Դաշնությունը մշտապես եւ ոչ անհաջող կերպով փնտրում է փոխադարձ շահեր:

«Պահպանողականների» ներկայացուցիչները տարակուսանք էին հայտնում այն կապակցությամբ, թե ինչ ոգեւորությամբ են «իշխանամետ» եւ «արեւմտամետ» շրջանակները հարձակվում Մարգարիտա Սիմոնյանի վրա՝ վերոհիշյալ գրառման համար: «Հարցվածների» այս կատեգորիան, ինչպես **նաեւ հանրային կարծիքի «արեւմտամետ»** որոշ **առաջնորդներ** համոզված էին, որ «Россия Сегодня»-ի գլխավոր խմբագիրը չի հնչեցրել բացառապես անձնական տեսակետ, սակայն դրանից հակառակ եզրակացություն էին անում. պետք չէ ներծծվել Կրեմլի դեմ ագրեսիայով, այլ պետք է մտածել, թե ինքդ ինչն այնպես չես արել: Համոզմունք հայտնվեց, որ Հայաստանն ինքն իրենից շատ բան չի ներկայացնում եւ չի կարող անտեսել իր վարքագծին այնպիսի երկրների արձագանքը, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Իրանը: 1990-ականների սկզբին Հայաստանում նույնպես հավակնոտ տրամադրություններ կային, բայց ամեն ինչ ավարտվեց նրանով, որ 1995-ին ստիպված եղան ռուսական ռազմաբազա տեղադրել Գյումրիում: Պատմությունը կրկնվեց 2020 թվականի հուլիսին. սկզբում իշխանամետ շրջանակները հուզական հարձակումներ սկսեցին Սիմոնյանի վրա, որոշ մարդիկ միտումնավոր հակառուսական տրամադրություններ էին հրահրում, բայց հետո երկրի ղեկավարությունը, հասկացավ Տավուշի դեպքերի լրջությունը, հետքայլ արեց եւ փորձեց ռեաբիլիտացվել Մոսկվայի առջեւ: Ի տարբերություն «հարցվածների» մյուս երկու կատեգորիաների, որոնք ավելի արդյունավետ էին համարել Արեւմուտքից հնչած արձագանքը, «պահպանողականները» հատուկ կարեւորություն էին տվել Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ-ի հայտարարությանը եւ Ռուսաստանի

Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության գլխավոր շտաբների համատեղ հայտարարությանը։

Այս փուլում որոշակի ուշադրություն է դարձվել Հայաստանում ընդունված Ազգային անվտանգության ռազմավարությանը։ Փաստաթուղթը, հիմնականում իշխանությունների հակառակորդների կողմից, չափազանց թույլ է համարվել։ Այս համատեքստում քննարկվել են ռազմավարական դաշինքներին սպառնացող վտանգները, որոնք դրսեւորվել են ՀԱՊԿ անդամներ Ռուսաստանի եւ Բելառուսի կողմից Ադրբեջանին հարձակողական զենքի վաճառքով։ Հայաստանի նկատմամբ այս կազմակերպության մի շարք անդամների վերաբերմունքի պատճառով, Տավուշի սրացման հետ կապված՝ Երեւանի դիմելը ՀԱՊԿ-ին անիմաստ էր, քանի որ Ղազախստանն ու Բելառուսը ավելի շուտ կաջակցեն Ադրբեջանի դիրքորոշմանը։

Կարծիք էր հնչել, որ Մինսկի խումբն ու նրա համանախագահները ազդեցության չնչին լծակներ ունեցող կառույց են։ Իսկ Հայաստանի ղեկավարությունը, սեփական անկարողության պատճառով դառնալով տարածաշրջանի տարբեր ուժերի աշխարհաքաղաքական խաղերի զոհը, բաց է թողել հնարավորությունը ԱՄՆ-ի, ԵՄ-ի եւ Ռուսաստանի գործուն ուշադրությունը հրավիրելու ստեղծված ծանր իրավիճակի վրա։ Զսպման միջազգային լծակների բացակայությունը Թուրքիային թույլ տվեց Հայաստանին դնել ծայրահեղ վտանգավոր վիճակի մեջ։

Որպես Հայաստանում «ռուս գործակալների» թեմայի շուրջ աղմուկ բարձրացնելու անհաջող պատճառ՝ **«պահպանողականները»** մեջբերում էին «Դոսյե» խմբի համապատասխան ուսումնասիրությունը։ Խոսվում էր ամերիկյան ազդեցության տակ հակառուսական ալիք բարձրացնելու անընդունելիության մասին. ստացվում է, որ «արեւմտամետ» շրջանակները մերկացնում էին «ռուսամետներին»։ Այստեղ հարկ է նշել, որ այս հետազոտության տեղեկատու խմբի այն մասը, որը պայմանականորեն բաժանվել է երեք այլ կատեգորիաների, նույնպես մեծ նշանակություն չի տվել «Դոսիե»-ի ուսումնասիրությանը՝ նշելով դրա մակերեսայնությունը։

«Պահպանողականների» պայմանական կատեգորիայի ներկայացուցիչների կողմից առավել կամ նվազ հաճախականությամբ շոշափվող այլ թեմաներից արժե առանձնացնել եւս երեքը։ Նախ՝ նրանք պնդում էին, որ իրենք եվրոպական կառույցներում շարունակում են ավելի արդյունավետ աշխատել ի շահ երկրի, քան Հայաստանի ներկայիս իշխանությունները։ Երկրորդ՝ ուշադրություն էին հրավիրում այն բան վրա, որ Ադրբեջանում ԱՄՆ դեսպանը հայերին մեղադրել է Լոս Անջելեսում ադրբեջանցիների հետ բախումների մեջ։ Իսկ ՀՀ ԱԳՆ-ից պահանջում էին ՀՀ-ում ԱՄՆ դեսպանից կա՛մ հերքում, կա՛մ առնվազն համարժեք հայտարարություն պահանջել։ Երրորդ, նրանք հրատապ էին համարում հուլիսյան սրացումից հետո ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում բանակցությունների վերսկսումը եւ հայ-ադրբեջանական սահմանին եւ Լեռնային Ղարաբաղի շփման գծում մոնիտորինգի իրականացման վերաբերյալ Վիեննայի եւ Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածություններն օրակարգ վերադարձնելը։ Այս առումով առաջարկվում էր նպաստել ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ տիեզերական ոլորտում ռազմավարական համագործակցության հաստատմանը, ինչը հնարավորություն կտար օպերատիվ կերպով լուծել հարցերը՝ տիեզերական

մոնիտորինգի կիրառմամբ ոչ միտումնավոր էսկալացիան կանխելու եւ թեժ կետերում միջադեպերը կառավարելու միջոցով:

Հետազոտության այս փուլում **«փորձագետների» պայմանական կատեգորիայի** կողմից բացատրություն էր տրվում Մոսկվայի եւ Երեւանի միջեւ փոխըմբռնման ցածր մակարդակի մասին: Ըստ այս կատեգորիայի «հարցվողների»՝ ե՛ւ ռուսական, ե՛ւ հայկական քաղաքական մշակույթներում գերակշռում է հակազդեցության տարրը, այլ ոչ թե երկու պետությունների միջեւ առկա բազմաթիվ փոխադարձ շահերի փնտրտուքը:

Կարծիք էր հայտնվում նաեւ, որ Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին եւ մասնակցությունը Արեւելյան գործընկերությանը, ինչպես եւ CEPA-ի իրականացումը միմյանց չեն խանգարում: ԵՄ-ն բարեփոխումների իրականացման հիմնական գործընկերն է, սակայն ԵԱՏՄ-ից դուրս գալը առկա իրավիճակում չի համապատասխանում Հայաստանի շահերին: ԵՄ-ում հիասթափություն չկա նաեւ Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության առնչությամբ:

«Հարցվածների» այս կատեգորիայում ընդգծվել է, որ Երեւանը Թուրքիայի ռազմական ակտիվությունն ընկալում է որպես Հարավային Կովկասում նրա հավակնությունների արտացոլում, որը սպառնում է իր կենսական ազգային շահերին: Նման զարգացման հիմնական խոչընդոտը Ռուսաստանի դիրքորոշումն է, որը տարածաշրջանը համարում է իր օրինական հատուկ շահերի գոտի: Սակայն չի կարելի բացառել, որ ռուս-թուրքական հնարավոր գործարքը երկու երկրների մրցակցությունը կվերածի փոխշահավետ գործոնի, ինչը հարված կհասցնի հայկական շահերին: Ավելին, եթե եւ երբ Կրեմլը որոշի, որ Հայաստանի ղեկավարությունը լիովին վստահելի չէ, Ռուսաստանը կարող է թույլ տալ Թուրքիային սահմանափակ ռազմական միջամտություն Ղարաբաղյան հակամարտությունում՝ դրդելով իշխանափոխություն Երեւանում: Միեւնույն ժամանակ, թեեւ Ռուսաստանը վերահսկում է իրավիճակը, սակայն չի կարող միշտ զսպել Ադրբեջանին, քանի որ ինքը հարձակողական զենք է վաճառում նրան եւ որեւէ պատճառ չունի արգելելու դրա օգտագործումը այն պրոբլեմի լուծման համար, որը Բաքուն համարում է հիմնականը:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման պատմությունը վերլուծելիս տրվում էր հետեւյալ գնահատականը: 2011 թվականի Կազանյան փաստաթղթից ի վեր Ռուսաստանը հետեւողականորեն առաջ է քաշել իր մոդելը («Լավրովի պլանը»), որը պետք է որ դուր չգար ԱՄՆ-ին եւ Ֆրանսիային, բայց նրանք ոչինչ չէին կարող փոխել: Վաշինգտոնն ու Փարիզը կարող էին նույնիսկ համաձայնել «Լավրովի պլանին», որպեսզի չստանան նոր հակամարտություն, որտեղ ամեն ինչ որոշում են Ռուսաստանը եւ Թուրքիան:

Հակամարտության հետագա ճակատագրի վերաբերյալ առաջարկվում էին հետեւյալ սցենարները: Հասկանալով, որ գտնվում է Ռուսաստանի ազդեցության գոտում, Հայաստանն անկախությունից ի վեր հնարավորություններ էր փնտրում բարելավելու հարաբերությունները ԱՄՆ-ի, ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի հետ: Հայաստանի արտաքին քաղաքականության այս ուղղությանը զարկ տրվեց «Թավշյա

հեղափոխությունից» հետո, որը ողջունվեց եվրատլանտյան հանրության կողմից։ Միաժամանակ պարզ էր, որ Բայդենի վարչակազմը ձգտում էր նվազեցնել Ռուսաստանի նշանակությունը Հարավային Կովկասում, իսկ Թուրքիան կկատարեր բուլդոզերի դերը։ Նման սցենարի դեպքում Հայաստանը երկու տարբերակ ունի. եթե Երեւանը ցանկանում է տարածաշրջանում ամերիկյան քաղաքականությանը համահունչ ընթանալ, ապա պետք է բանակցի Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ, ինչը հնարավոր կլինի միայն Ղարաբաղում կապիտուլյացիայի միջոցով։ Մեկ այլ հնարավորություն էր Ռուսաստանի հետ դաշինքի պահպանումը եւ նրա հետ միասին թուրքական ազդեցության աճի կանխումը՝ այդպիսով հակադրվելով տարածաշրջանում ԱՄՆ ռազմավարական շահերին։

Կարեւորվել էր ԱՄՆ-ից Մինսկի խմբի նախկին համանախագահ Ռիչարդ Հոգլանդի առաջարկը՝ Լեռնային Ղարաբաղը ՄԱԿ-ի պրոտեկտորատին հանձնելու վերաբերյալ, որը, ըստ հեղինակի, տեղավորվում է կարգավորման փուլային սկզբունքի մեջ, որին աջակցում է Մինսկի խումբը։ Սակայն նշվում էր, որ ստեղծված իրավիճակում դա հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե պահպանվեն Ռուսաստանի եւ Թուրքիայի հատուկ շահերը, այսինքն, «Լավրովի պլանը»՝ այս կամ այն ձեւափոխմամբ։

Ուշադրություն էր դարձվել նաեւ պատմական համատեքստին եւ առկա իրավիճակի վրա դրա հնարավոր պրոյեկցիային։ Մանավանդ, որ Սեւրի պայմանագրի 100-ամյակը (2020թ. օգոստոսի 10) ընկավ հետազոտության երկրորդ փուլի միջակայքում։ ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը հարցազրույցում դա նշել էր որպես կարեւոր փաստաթուղթ, որը պարունակում է հայկական հարցի արդարացի լուծում։ Նման գնահատական Հայաստանի իշխանությունների կողմից առաջին անգամ էր հնչում։ Կարծիք էր արտահայտվել, որ այս պայմանագրի տարեդարձը պետք է նշել հանգիստ՝ չմոռանալով մեկ տարի անց ստորագրված Մոսկվայինն ու Կարսինը։ Որոշ քաղաքական շրջանակներ չհիշատակեցին Սեւրի պայմանագիրը՝ այն դիտարկելով որպես հակառուսական։ Մասնավորապես, Սեւրի պայմանագրի անիրագործելիությունը, նրանց կարծիքով, այն էր, որ Հայաստանը հույսը չէր դրել սեփական ուժերի վրա։ Հարցերը «թղթով» չեն լուծվում, պետք է կարողանալ «ոչ» ասել աշխարհին եւ ուժով լուծել խնդիրները, այդ թվում՝ փաստաթղթերում արձանագրված։

Ինչ վերաբերում է Հայաստանի նորագույն պատմությանը, ապա, ըստ **«փորձագետների» պայմանական կատեգորիայի** դիրքորոշման, ՀՀ առաջին երեք նախագահները հասկացել էին Արեւմուտքի հետ համագործակցության խորացման կարեւորությունը՝ որպես անհրաժեշտ հակակշիռ Ռուսաստանի ազդեցությանը։ Առանց դրա՝ Մոսկվայի հետ հարաբերություններ կառուցելը վտանգավոր է։ Նույնը փորձեց անել Նիկոլ Փաշինյանը, բայց հիմա թե՛ Հայաստանում, թե՛ Ռուսաստանում ստեղծված իրավիճակը, թե՛ նրանց շուրջ ձեւավորվող աշխարհաքաղաքական միջավայրը նման քաղաքականության համար բարենպաստ չեն։ Սա է հիմնական դժվարությունը։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ. ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ.

44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

(ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27 - ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31, 2020)

Հետազոտության **այս փուլում** հայկական ԶԼՄ-ների եւ սոցիալական ցանցերի հայկական հատվածի որոշ արտաքին խաղացողներին վերաբերող անդրադարձները մեծապես պայմանավորված էին այն դերով, որ նրանք խաղացել կամ փորձել էին խաղալ ռազմական գործողությունների դադարեցման ուղղությամբ:

Այսպես, հաղորդվեց, որ 2020 թվականի հոկտեմբերի սկզբին ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը ստեղծված իրավիճակը հեռախոսով քննարկել է ռուս եւ ֆրանսիացի իր գործընկերներ Սերգեյ Լավրովի եւ Ժան-Իվ Լեդրիանի, ինչպես նաեւ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Սթիվեն Բիգունի հետ՝ ընդգծելով Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի ագրեսիայի վտանգավոր հետեւանքները եւ տարածաշրջանում ավելի խորը անկայունության ռիսկերը: Հայաստանի նախարարն ընդգծել էր ռազմական գործողությունների անհապաղ դադարեցման առաջնահերթությունը:

Այս հետազոտության համար ձեւավորված **տեղեկատու խմբի ներկայացուցիչներն** արձագանքել էին ռազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ բոլոր երեք հայտարարություններին՝ հոկտեմբերի 10-ին (Ռուսաստանի Դաշնության նախաձեռնությամբ), հոկտեմբերի 19-ին (Ֆրանսիայի նախաձեռնությամբ) եւ հոկտեմբերի 26-ին (Միացյալ Նահանգների նախաձեռնությամբ): Սակայն բոլոր երեք դեպքերում էլ Ադրբեջանի հասցեին հնչել էին պայմանավորվածությունները խախտելու մեղադրանքներ:

Մեծ ուշադրություն էր դարձվել Թուրքիայի կողմից Ադրբեջանին ցուցաբերվող աջակցությանը, ինչպես նաեւ այդ երկրի եւ վարձկան ահաբեկիչների ուղղակի ներգրավվածությանը պատերազմում: «Հարցվածները» կապ էին տեսել Լեռնային Ղարաբաղում պատերազմի եւ եվրոպական տարբեր քաղաքներում իրականացված ահաբեկչական հարձակումների միջեւ: Մասնավորապես, սոցցանցերում կարելի էր գտնել այսպիսի գրառումներ. «Բարբարոսություն եւ ահաբեկչություն է սփռվում ամենուր… Լեռնային Ղարաբաղի հայերը պայքարում են Թուրքիայի եւ դրա սպասարկու Ադրբեջանի կողմից հովանավորվող ահաբեկիչների դեմ»: «Եթե չեք ուզում, որ Եվրոպայի կենտրոնում մարդկանց գլխատեն, եթե դուք չեք ցանկանում, որ Նյու Յորքի կենտրոնում աշտարակներ պայթեցվեն, եթե ցանկանում եք խաղաղ ապրել խաղաղ հարեւանության մեջ, ՃԱՆԱՉԵ՛Ք ԱՐՑԱԽԸ: Արցախն ուժեղ է, բայց այնքան ուժեղ չէ, որ միայնակ դիմակայի միջազգային ահաբեկչությանը»:

Պատերազմի առաջին շաբաթներին տեղեկատու խմբի ներկայացուցիչները գոհունակություն էին հայտնել պատերազմի բռնկման վերաբերյալ միջազգային կազմակերպությունների եւ արեւմտյան երկրների արձագանքից: Մասնավորապես,

2020 թվականի հոկտեմբերի 7-ին ԵՄ արտաքին հարաբերությունների եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցչի հետ հարցի շուրջ Եվրախորհրդարանում տեղի ունեցած բանավեճը Հայաստանում դրական արձագանք էր ստացել: Պաշտոնական Վաշինգտոնի հայտարարությունը մեկնաբանվել էր որպես անուղղակի նախազգուշացում Թուրքիային՝ չներքաշվելու Ղարաբաղյան հակամարտությունում, գոհունակություն էր հայտնվել ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հավաստիացումներից, որ իր վարչակազմը ուշադիր հետեւում է իրադարձություններին՝ հույսեր կապելով (հետագայում չարդարացված - ***ԵՄՄ***) ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում խնդրի քննարկման հետ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի միջանկյալ որոշումը քաղաքացիական օբյեկտների եւ խաղաղ բնակչության դեմ հարձակումների անթույլատրելիության մասին, համարվել էր հայկական կողմի հաջողություն: Տարածվել էր ՄԻԵԴ-ում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի հայտարարությունը նոր ապացույցների ներկայացմամբ, որ «Ադրբեջանը անհրաժեշտ միջոցներ ձեռք չի առնում միջանկյալ միջոց կիրառելու որոշումը կատարելու ուղղությամբ … եւ Հայաստանը կօգտագործի առկա գործիքները մարդու իրավունքների խախտումները կասեցնելու համար»:

Տեղեկատվական խմբի այն հատվածը, որն այս հետազոտության շրջանակներում պայմանականորեն անվանվել էր **«պահպանողականներ»,** հատկապես ընդգծում էր Եվրոպական ժողովրդական կուսակցության եւ Կենտրոնամետ դեմոկրատների ինտերնացիոնալի (CDI) աջակցությունը, որին անդամակցում է մինչեւ 2018-ի մայիսը իշխանության ղեկին գտնվող Հայաստանի հանրապետական կուսակցությունը:

Լայնորեն լուսաբանվում էին ԱՄՆ-ում եւ եվրոպական երկրներում հայկական բողոքի ակցիաներն «ընդդեմ թուրք-ադրբեջանական ագրեսիայի»: Տեսակետներ էին հնչում, որ հենց այս գործողություններն են ստիպել ԱՄՆ պետքարտուղար Մայքլ Պոմպեոյին՝ Ղարաբաղյան պատերազմը դիտարկել որպես Վաշինգտոնի արտաքին քաղաքականության օրակարգի մաս: Որպես հայկական դիվանագիտության ձեռքբերում եւ Սփյուռքի ջանքերի արդյունք՝ նշվել են նաեւ ԱՄՆ Միչիգան նահանգի կողմից Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչումը, ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում նմանատիպ բանաձեւի ներկայացումը, խաղաղ բնակչության դեմ կիրառվող զենքի համար օգտագործվող սարքավորումների՝ Թուրքիա արտահանման դադարեցումը Կանադայի կողմից, Ժնեւի քաղաքային խորհրդի կողմից «Հայաստանի եւ Արցախի վրա թուրք-ադրբեջանական հարձակման» դատապարտումը: Մեջբերվում էին Լոս Անջելեսի քաղաքապետ Էրիկ Գարսետիի խոսքերը, որ «Լ.Ա.-ն հպարտ է՝ լինել հայկական սփյուռքի ամենամեծ տունը: Մենք աջակցում ենք Հայաստանի ժողովրդին: Ես կոչ եմ անում Վաշինգտոնի մեր ղեկավարներին հետեւողական եւ ամուր դիվանագիտություն վարել, որն անհրաժեշտ է Արցախի տարածաշրջանում խաղաղություն ապահովելու համար: Թուրքիան պետք է հետ կանգնի»:

«Հարցվածները», որոնք պայմանականորեն բնորոշվել են որպես «արեւմտամետներ», հատկապես բարձր էին գնահատել պատերազմի ժամանակ Ֆրանսիայի եւ, առաջին հերթին, նրա նախագահ Էմանուել Մակրոնի դիրքորոշումը: Մեջբերվել էին վերջինիս խոսքերը. «Ալիեւին ուղղակիորեն ասել եմ, որ ոչինչ չի արդարացնում

ադրբեջանական հարձակումը ԼՂ-ի վրա», նրա քննադատությունը Թուրքիային՝ վարձկաններ օգտագործելու համար: Կարծիք էր հնչել, որ Ֆրանսիան բոլորին (ԱՄՆ, ԵՄ, ՌԴ…) ստիպել է ընդունել, որ պատերազմը սկսել էր Ադրբեջանը: Խանդավառությամբ էին ընկալվել Փարիզի քաղաքապետ Անն Իդալգոյի խոսքերը. «Եթե ներկայիս հակամարտության միակ լուծումը Ղարաբաղի ճանաչումն է, պետք չէ երկմտել», ինչպես նաեւ Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր Վալերի Բոյենի կոչը Սենատի բոլոր խմբակցություններին՝ միանալ Ադրբեջանին եւ Թուրքիային դատապարտող բանաձեւի ընդունման եւ Արցախի Հանրապետության անկախության ճանաչման մասին իր միջնորդությանը:

«Արեւմտամետների» ամենաարմատական մասը պնդում էր, որ Միացյալ Նահանգները եւ եվրոպական առաջատար երկրները ցանկանում են, որ Հայաստանը հաղթի, եւ պատրաստ են ներել նրան հաջողության հասնելու ցանկացած մեթոդ՝ ներառյալ Ադրբեջանի տնտեսական եւ քաղաքացիական ենթակառուցվածքների ոչնչացումը: Իսկ քաղաքական առումով առաջարկվում էր Արցախը, այդ թվում՝ նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից (ԼՂԻՄ) դուրս գտնվող յոթ շրջանները հայտարարել Հայաստանի մաս եւ դիմել ՀԱՊԿ-ին՝ ամբողջ տարածքը պաշտպանելու համար: Սպասվող ձախողման դեպքում՝ դիմել Չինաստանին, Հնդկաստանին, Ֆրանսիային, Սաուդյան Արաբիային, Արաբական Միացյալ Էմիրություններին, Եգիպտոսին, ԱՄՆ-ին, Հունաստանին եւ Իրանին՝ «օդատիեզերական եւ ռազմատեխնիկական օգնություն ստանալու խնդրանքով»:

Նրանք ողջունում եւ քննարկում էին ռազմական օգնության ֆրանսիական առաջարկները: Նրանց կարծիքով՝ դրան խանգարեց Նիկոլ Փաշինյանի հայտարարությունը Մինսկի «անիմաստ» խմբի ձեւաչափին հավատարիմ մնալու մասին, ինչը ստիպեց Ֆրանսիային, որը պատրաստ էր անվերապահորեն աջակցել Հայաստանին, չեզոքություն պահպանել Մինսկի խմբի համանախագահի կարգավիճակում:

Տեղեկություններ էին տարածվում ինչպես եվրոպական երկրների առանձին քաղաքացիների, այնպես էլ ԵՄ անդամ երկրների քաղաքական գործիչների կողմից աջակցության դրսեւորումների մասին, մասնավորապես՝ Լյուքսեմբուրգի խորհրդարանի կողմից Ադրբեջանի ագրեսիվ ռազմական գործողությունները միաձայն դատապարտելու, Կոնգրեսի 21 պատգամավորների եւ Իսպանիայի 15 սենատորների հայտարարության մասին, որով դատապարտվում էր թուրք-ադրբեջանական ագրեսիան Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դեմ: Մեծ նշանակություն էր տրվել Հունաստանի արտաքին գործերի նախարար Նիկոս Դենդիասի այցին Երեւան՝ պատերազմական իրավիճակում: Հաղորդվել է, որ Միլանի քաղաքային խորհուրդը դատապարտել է «թուրք-ադրբեջանական ագրեսիան Արցախի դեմ», ճանաչել Արցախի Հանրապետության անկախությունը եւ Իտալիայի կենտրոնական իշխանություններից պահանջել նմանատիպ քայլեր ձեռնարկել:

Միեւնույն ժամանակ, «հարցվածները», որոնք պայմանականորեն բնորոշվել են որպես «արեւմտամետներ», պատերազմի սանձազերծման համար Ադրբեջանի պատասխանատվության մասին Արեւմուտքի արձագանքը հակադրել են Մոսկվայի

եւ ՀԱՊԿ-ի լռությանը, միայն այն պատճառով, որ Լեռնային Ղարաբաղը, ֆորմալ առումով, Ռուսաստանի գլխավորած անվտանգային կառույցի մեջ մտնող տարածքի մաս չի կազմում: Ավելին, այս կատեգորիայի ներկայացուցիչները պատերազմ սկսելու մեջ շատ անգամ մեղադրում էին ոչ միայն Ադրբեջանին ու Թուրքիային, այլ նաեւ Ռուսաստանին:

Հրապարակվել էր ծաղրանկար, որի իմաստը հետեւյալն էր. «Ռուսաստան+Թուրքիա=Ադրբեջան»: Դրանից բացի, հնչում էին այնպիսի հեգնական հայտարարություններ, ինչպիսիք են. «Ումի՞ց պետք է մեզ պաշտպանի ռուսական ռազմակայանը: Հավանաբար կորոնավիրուսի՞ց ...», հայ-ադրբեջանական հակամարտությունում ռուսական քաղաքականության բանաձեւը հետեւյալ ձեւակերպումն ուներ. «Նախ հարձակողական զենքեր ես վաճառում մի կողմին, հետո վաճառում ես պաշտպանողական զենքեր մյուս կողմին, իսկ երբ վաճառածդ զենքը սկսում է սպառվել, խաղաղության կոչեր ես անում, որ հանդարտվեն, ուշքի բերեն իրենց տնտեսությունները ու նոր զենքեր գնեն քեզնից...»:

«Հարցվածների» նույն պայմանական կատեգորիան ողջունել էր ԱՄՆ ազգային անվտանգության հարցերով խորհրդական Օ'Բրայենի առաջարկը՝ Ղարաբաղյան հակամարտության գոտում օգտագործել սկանդինավյան, այլ ոչ թե Մինսկի խմբի համանախագահող երկրներից որեւէ մեկը ներկայացնող խաղաղապահներ: Նրանք նախեւառաջ նշել էին ռուսական կոնտինգենտի տեղակայման անընդունելիությունը: Նշվել էր, որ պատմությունը չգիտի դեպքեր, երբ իսկական դաշնակիցը, համակողմանի օգնության փոխարեն, խոսեր իր խաղաղապահներին բերելու մասին: Այս առումով հավանություն էր առաջացրել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ պատերազմի առաջին օրերին հայտնած դիրքորոշումը, որ դեմ է հակամարտությունում արտաքին ռազմական միջամտությանը եւ հայտարարել էր, որ Վլադիմիր Պուտինի հետ այս թեման չի քննարկել: Ճիշտ է, հետագայում որոշակիորեն փոխվեց թե՛ Փաշինյանի գնահատականը, թե՛ արտաքին միջամտության նկատմամբ վերաբերմունքը:

«Արեւմտամետների» դիրքորոշման հետ ի սկզբանե անհամաձայնություն էր արտահայտվել **«Պահպանողականների» պայմանական կատեգորիայի** կողմից: Նրանք այլընտրանք չէին տեսնում ռուս խաղաղապահներին, որոնք մինչեւ 2020 թվականի հոկտեմբերի վերջ ընդունելի էին համարվել ե՛ւ Երեւանում, ե՛ւ Բաքվում: «Պահպանողականները», անդրադառնալով սկանդինավյան խաղաղապահների թեմային, կոնկրետացնելով նշում էին, որ վերջիններս կարող են լինել շվեդներ, դանիացիներ, ֆիններ կամ նորվեգացիներ: Ընդ որում, Դանիան եւ Նորվեգիան անդամակցում են ՆԱՏՕ-ին՝ այն նույն ռազմաքաղաքական դաշինքին, որի անդամ է Թուրքիան: Այսպիսով, ըստ «պահպանողականների», Լեռնային Ղարաբաղում ՆԱՏՕ-ին անդամակցող սկանդինավյան երկրների խաղաղապահների հայտնվելը, ըստ էության, կնշանակի Հարավային Կովկասում Մոսկվայի ազդեցության ամբողջական կորուստ՝ հօգուտ Անկարայի:

Հետազոտության այս փուլում հատկապես ակնհայտ էր օտարերկրյա խաղացողների նկատմամբ Հայաստանում հանրային տրամադրությունների փոփոխականությունը: Պատերազմի մեկնարկից երկու շաբաթ անց հիասթափություն սկսեց ի հայտ գալ

ԱՄՆ վարչակազմի դիրքորոշումից, որը չօգտագործեց իր ազդեցության լծակները հակամարտող կողմերի վրա: Ավելի քան 10 օր պահանջվեց, որպեսզի Fox News-ը հեռարձակի պատերազմի մասին առաջին ռեպորտաժը: Դժգոհություն էր արտահայտվել Դոնալդ Թրամփի եւ ԱՄՆ ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ռոբերտ Օ'Բրայենի հայտարարություններից, որոնք սահմանափակվել էին սոսկ ափսոսանք հայտնելով ձախողված զինադադարի համար՝ չմեղադրելով ռազմական գործողությունների վերսկսման նախաձեռնողներին: Այս դեպքում հիասթափությունը պայմանավորված էր նաեւ նրանով, որ նույն Օ'Բրայենը մինչ այդ խոստովանել էր, որ պատերազմում օգտագործվել են ջիհադիստ վարձկաններ:

Պատերազմի ավարտին մոտ՝ հանրային տրամադրությունների արձանագրված փոփոխությունը վերաբերում էր նաեւ Եվրամիությանն ու առանձին եվրոպական երկրներին: Ավելի հաճախակի էին դարձել ԵՄ երկակի ստանդարտների մասին հայտարարությունները, որոնք պաշտոնական մակարդակով հստակ ոչինչ չէին նշում Լեռնային Ղարաբաղում ավերածությունների եւ խաղաղ բնակիչների ոչնչացման մասին, սակայն անմիջապես եւ միանշանակ կերպով անդրադառնում էին ադրբեջանական Գյանջայի բնակելի թաղամասի վրա ընկած հայկական հրթիռներին: Դա բացատրվում էր, մասնավորապես, Բաքվից եւ Անկարայից եվրոպացիների վրա գործադրվող արդյունավետ ճնշումներով. «բոլորը սիրում են հաղթողներին»: Միեւնույն ժամանակ, «հարցվածներն» իրենք էլ առանձնապես ընտրողականություն չեն ցուցաբերել ծանր ռազմական իրավիճակում Հայաստանին աջակցություն ցուցաբերող անձանց որոնման հարցում: Նրանցից ոմանք ողջունել են քաղաքական այն գործիչների հայամետ հայտարարությունները, որոնց հետ ունեցել են հակադիր արժեքային կողմնորոշումներ, այդ թվում՝ իտալիական «Հյուսիսի լիգայի» առաջնորդներից Մատեո Սալվինին եւ ՌԴ Պետդումայի հետադիմական տրամադրություններ ունեցող պատգամավոր Վիտալի Միլոնովին:

2020 թվականի հոկտեմբերի վերջին, երբ Հայաստանի բոլոր քիչ թե շատ իրազեկ քաղաքացիների համար ակնհայտ դարձավ պատերազմի անբարենպաստ ընթացքը, նկատելի փոխակերպման ենթարկվեցին նաեւ «արեւմտամետների» արմատական մասի գնահատականները: Այս ընթացքում նրանց կողմից սկսեցին ահազանգեր տարածվել՝ օգնություն խնդրելու, որտեղից էլ որ դա գալու լիներ: Նրանք եկել էին այն եզրակացության, որ Արեւմուտքն այս իրավիճակում Հայաստանի դաշնակիցը չէ, քանի որ նրանք Հայաստանը դիտարկում են որպես Ռուսաստանի ազդեցության գոտի: Հենց դրանով էին, ի թիվս մի շարք տարբեր պատճառների, բացատրվում այն խոսակցությունները, թե ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հայանպաստ բանաձեւը մերժվել է Մեծ Բրիտանիայի կողմից: Բացի Մոսկվայի ուղեծրում գտնվելուց, Երեւանը որեւէ շահագրգռվածություն չէր դրսեւորել Լոնդոնի հետ հարաբերությունները կարգավորելու հարցում (երկար տարիներ այս երկրում նույնիսկ դեսպան չուներ):

ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի դերի վերաբերյալ է՛լ ավելի մեծ թերահավատություն արտահայտեցին **պայմանական «պահպանողականները»**: Այս վերաբերմունքը սրվեց, երբ պատերազմը մոտենում էր ավարտին: Մասնավորապես, հնչել են հետեւյալ գնահատականները. «Սա է Եվրոպական միության՝ բոլորիս հիասթափեցնող

պահվածքի հիմնական պատճառը։ Մինչեւ տարեվերջ 10 միլիարդ խորանարդ մետր ԵՄ առաջին անգամ մուտք գործող ադրբեջանական գազն է։ Երկար ժամանակ այս սպառնալիքը հավասարակշռվում էր արժեհամակարգային հենք ունեցող ԵՄ-Հայաստան քաղաքական օրակարգով։ Ավաղ, Արցախի հանդեպ սանձազերծած թուրք-ադրբեջանական-ահաբեկչական պատերազմը բացահայտեց, որ եվրոպական ցինիկ շահերը կուլ տվեցին արժեքները», «ԱՄՆ եւ ԵՄ գործող դեսպանները կդառնան քավության նոխազ եւ Հայաստանում այլեւս անելիք չունեն։ Դեռ մեծ հարց է, այսքանից հետո հատկապես տոտալ որակազրկված եւ բարոյազրկված ԵՄ-ն Հայաստանում որեւէ անելիք ունի՞... ԱՄՆ-ին էլ որոշակիորեն ջրի երեսին դեռ կպահի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահի կարգավիճակը»։

Սրա հետ միաժամանակ, որոշ «հարցվածներ» սկսեցին որոշակի հույսեր կապել Ջո Բայդենի սպասվող ընտրության հետ՝ ողջունելով նրա հայտարարությունը Ադրբեջան եւ Թուրքիա զենքի մատակարարումը դադարեցնելու անհրաժեշտության մասին, Ռուսաստանի դատապարտումը՝ հակամարտությունը սրելու, իսկ Թուրքիային՝ Սիրիայից Լեռնային Ղարաբաղ վարձկաններ ուղարկելու համար։ Ուստի կոչ է ուղղվել Միացյալ Նահանգների հայկական շրջանակներին՝ համախմբվել Բայդենի թեկնածության շուրջ, որը կվերադառնա իր երկրի ակտիվ համաշխարհային դերին։ Միաժամանակ, կանխատեսումներ էին հնչում, որ ՀՀ իշխանությունների «դավաճանական քաղաքականության» պատճառով նույնիսկ Դեմոկրատական կուսակցության թեկնածուն, ընտրվելուց հետո, նախկին ԼՂԻՄ-ի շուրջ 7 շրջանները կճանաչի ադրբեջանական։

Հետազոտության այս փուլում պատերազմի հետ կապված հանգամանքների վերաբերյալ արմատապես այլ տեսակետ է ներկայացվել այն «հարցվողների» կողմից, որոնք պայմանականորեն դասակարգվել են որպես **«պահպանողականներ»**: Որպես Ադրբեջանին եւ Թուրքիային զսպելու եւ էսկալացիան կանխելու միակ գործոն՝ նրանք համարում էին Երեւանի եւ Մոսկվայի միջեւ վստահելի դաշնակցային հարաբերությունները։ Սակայն 2018-ին իշխանության եկած քաղաքական ուժը «սորոսականներին», որոնք «պերսոնա նոն գրատա» էին համարվում Ռուսաստանի Դաշնությունում, նշանակեց Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի անվտանգության ոլորտում առանցքային պաշտոններում։ ՀԱՊԿ նախկին գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովի նկատմամբ քրեական հետապնդումը խոցելի դարձրեց Հայաստանի անդամակցությունն այս կազմակերպությանը։ Բացի այդ, Իրանի հետ վատթարացած հարաբերությունների հետեւանք էր եղել զենքի մատակարարման համար վերջինիս օդային տարածքի փակումը։ Արեւմուտքի դժգոհությունն էր առաջացրել ռուսական զորախմբի կազմում Սիրիա հայ զինծառայողներ ուղարկելը։

Տեղեկատվական խմբի այս հատվածը նշել էր, որ ո՛չ ԱՄՆ-ը, ո՛չ ԵՄ-ն, ո՛չ Ռուսաստանի Դաշնությունը, ո՛չ Իրանը ներկա իրավիճակում շահագրգռված չեն թույլ տալ Թուրքիայի մուտքը Հարավային Կովկաս։ Եվ նախորդ իշխանությունների օրոք Հայաստանի քաղաքականությունը համապատասխանում էր այս շահերին։ Սակայն Նիկոլ Փաշինյանն ու նրա կառավարությունը չկարողացան պաշտպանել այս դիրքորոշումը, արդյունքում՝ այժմ նույնիսկ Ռուսաստանին փաստարկներ չեն մնացել՝ Թուրքիայի մուտքը տարածաշրջան կանխելու համար։

Այս կատեգորիայի համար որեւէ կասկած չկար առ այն, որ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի եւ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի նախկին պետ Օնիկ Գասպարյանի հայտարարություններն այն մասին, որ Նիկոլ Փաշինյանը բաց է թողել պատերազմը ավելի բարենպաստ պայմաններում դադարեցնելու հնարավորությունը, ճիշտ են: Սա գնահատվում էր որպես եւս մեկ հանգամանք, որը թույլ չէր տվել օգտվել Հայաստանի Հանրապետության եւ ԼՂ անվտանգության ապահովման գործում Մոսկվայի որոշիչ դերից: Պատասխանելով իրենց քաղաքական հակառակորդներին՝ «պահպանողականները» պարբերաբար հնչեցնում էին այս միտքը. «Որտեղ տեսնեք հակառուսական տրամադրություններ գեներացնող գրառումներ, իմացեք, որ գործ ունեք թուրք-ադրբեջանա-իսրայելական շահեր սպասարկող ազդեցության գործակալական ցանցի հետ»: Որպես նրանց փաստարկի շարունակություն՝ կարելի է մեջբերել հետեւյալ հեգնական արտահայտությունը. «Ուրեմն, Թուրքիան ու Իսրայելը զենք ու զինվորական են տրամադրում Ադրբեջանին, ամերիկացիք մի օր շուտ իրենց քաղաքացիներին նախազգուշացնում են, որ տներից չհեվնեն, վրացիք չեն թողնում իրենց տարածքով ռազմաբեռներ բերեն Հայաստան, բայց էս ամեն ինչում, ըստ «методички», ո՞վ ա մեղավոր: Իհարկե, ռուսները…»:

Հետազոտության շրջանակներում պայմանականորեն սահմանված **«փորձագետների»** կատեգորիան այս փուլում շարունակել է ուշադրություն դարձնել ԵՄ-ի եւ ՀՀ-ի հարաբերություններին պատերազմի համատեքստից դուրս: Ընդգծվել է, որ «ԵՄ-ն կարող է օգնել հզորությունների զարգացման, բարեփոխումների իրականացման հարցում, որպեսզի օրենքի գերակայություն հաստատվի, եւ մարդու իրավունքներն ամրապնդվեն ամբողջ Հարավային Կովկասում»: Այդ թվում՝ «ԵՄ-ն ունի զգալի փափուկ ուժ՝ ազդելու իրադարձությունների վրա՝ աջակցելով բարեփոխումներին: Բրյուսելը շատ ակտիվ է եղել Արեւելյան գործընկերության երկրների համար արդյունավետ փաթեթ մշակելիս՝ կապված COVID-19 համավարակի տարածման հետ՝ 2020 թվականի ապրիլին մեկնարկած «Team Europe» նախաձեռնության շրջանակներում: 2020 թվականի սեպտեմբերի կեսերին ԵՄ-ն Հայաստանին 30 մլն եվրո հատկացրեց COVID-19-ի դեմ պայքարի եւ եւս 30 միլիոն՝ արդարադատության համակարգի բարեփոխումներին աջակցելու համար»: Ընդ որում նշվել էր, սակայն, որ «փափուկ ուժը միանշանակ բավարար չէ Ղարաբաղում պատերազմը դադարեցնելու համար», եւ միեւնույն ժամանակ, որ ԱՄՆ-ը «զգալիորեն հետ է քաշվել տարածաշրջանից»:

Այս համատեքստում համոզմունք էր հայտնվում, որ տարածաշրջանում գերակշռում են երկու խաղացողներ՝ Ռուսաստանը եւ Թուրքիան: Պատերազմը «Լավրովի պլանի» հարցում Թուրքիայի եւ Ռուսաստանի դիրքորոշումների մերձեցման արդյունք էր: Մոսկվան կանգնած էր երկընտրանքի առաջ՝ կա՛մ նվազեցնել իր ազդեցությունը Հայաստանի վրա, կա՛մ ամբողջությամբ կորցնել Ադրբեջանը, եւ պատերազմի ողջ ընթացքում փնտրում էր լուծում, որը կարող էր նվազագույնի հասցնել իր կորուստները՝ առկա այդքան բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ.

ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

(ՆՈՅԵՄԲԵՐԻ 10, 2020 - ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31, 2021)

Հետազոտության այս փուլը նպատակահարմար էր բաժանել **երեք ժամանակահատվածի.** 1. 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ (Ադրբեջան-Հայաստան-Ռուսաստան) հայտարարությունից անմիջապես հետո ընկած ժամանակահատվածը եւ ռազմական գործողությունների դադարեցումը. 2. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի ժամանակահատվածը. 3. Հետընտրական շրջանը (որը նշանավորվեց նաեւ հայ-ադրբեջանական եւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման բանակցային գործընթացի ակտիվացմամբ)։

Նշված ժամանակահատվածներից առաջինում ուշադրությունը կենտրոնացվել էր 44-օրյա պատերազմի արդյունքների եւ կատարվածից եզրակացությունների վրա։ Բայց, քանի որ այս դիսկուրսը տեղի էր ունեցել Հայաստանում ներքաղաքական պայքարի սրման համատեքստում, իրավիճակի մասին արտահայտված գնահատականներն ու վերլուծությունները հաճախ ենթարկվել են համապատասխան կոնյունկտուրայի խիստ ազդեցությանը եւ ոչ միշտ են խնդիրների նկատմամբ իրատեսական մոտեցումներ պարունակել։

Ինչպես եւ հետազոտության նախորդ փուլերում, տեղեկատու խմբի այն ներկայացուցիչների կարծիքները, որոնք պայմանականորեն դասվել են **Նիկոլ Փաշինյանի** եւ նրա թիմի **կողմնակիցների եւ չափավոր «արեւմտամետների»** շարքին, հիմնականում համընկել են։ Մասնավորապես, երկուսն էլ, խոսելով արտաքին խաղացողների դերի մասին, պատերազմում Հայաստանի պարտության հիմնական պատասխանատվությունը դրել են Ռուսաստանի վրա, որը «չի կատարել իր դաշնակցային պարտավորությունները», թուլացրել է ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի ինքնիշխանությունը՝ իր խաղաղապահ զորախումբը տեղակայելով Լեռնային Ղարաբաղում, եւ միեւնույն ժամանակ խոցելի է դարձրել ՀՀ վարչապետ Փաշինյանի դիրքերը։ Միեւնույն ժամանակ նշվում էր, որ Արեւմուտքը եւ միջազգային հանրությունը պասիվություն են դրսեւորել՝ կապված կորոնավիրուսային համավարակի, ԱՄՆ նախագահական ընտրությունների վրա կենտրոնանալու, ինչպես նաեւ Եվրամիությունում շարունակվող ընդհանուր ճգնաժամի հետ։ Այստեղից եզրակացություն էր արվել, որ Երեւանը պետք է նոր ռեսուրսներ գտնի ազգային անվտանգության ապահովման համար՝ չսահմանափակվելով այս ոլորտում Ռուսաստանի եւ ՀԱՊԿ-ի հետ համագործակցությամբ, բայց նաեւ չհրաժարվելով դրանցից, աշխատելով ինչպես սեփական պաշտպանունակության ամրապնդման, այնպես էլ այլընտրանքային արտաքին գործընկերներ փնտրելու ուղղությամբ։ Դիտարկվում էր նաեւ երկու խնդրահարույց հարեւանների՝ Ադրբեջանի եւ, առաջին հերթին, Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու հնարավորությունը։

Տեղեկատու խմբի նշված հատվածներից «հարցվածների» մեծամասնությունը կարծում էր, որ Թուրքիան եւ Ռուսաստանը գործել եւ շարունակում են գործել համաձայնեցված՝ թուլացնելով ԱՄՆ-ի, ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի դիրքերը Հարավային Կովկասում: Արդյունքում, պատերազմի ավարտից հետո բոլոր վիճելի իրավիճակներում Մոսկվան, պարզվում է, Ադրբեջանի կողքին է, ոչ թե իր ռազմավարական դաշնակից Հայաստանի: Եվ քանի որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները՝ ԱՄՆ-ը եւ Ֆրանսիան, դժգոհ էին, որ երրորդ համանախագահը՝ Ռուսաստանը, իրենց դուրս թողեց տարածաշրջանային գործընթացներից, Երեւանը պետք է հենց նրանց հետ ակտիվացնի համագործակցությունը, այդ թվում՝ առավելագույնս օգտագործելով Մինսկի խումբը Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը բարձրացնելու համար:

Այստեղ հարկ է նշել, որ ՀՀ իշխանություններն իրենք չէին բարձրաձայնում վերը նկարագրված մոտեցումները՝ ընդգծելով Մոսկվայի հետ իրենց կապերի ամրությունն ու անվերապահ առաջնահերթությունը, սակայն լրատվական տարածքում նրանց ակտիվ աջակիցները, ըստ էության, մի փոքր այլ դիրքորոշում էին հայտնում:

2020 թվականի նոյեմբերի 9-ի **եռակողմ Հայտարարության ստորագրումից հետո առաջին շաբաթներին**, չնայած հայ հասարակության ընդհանուր անկումային տրամադրություններին, որոշ շրջանակներ դեռեւս հույսը պահպանում էին միջազգային հանրության ազդեցության ներքո հետպատերազմյան պարամետրերի հնարավոր ճշգրտումների վերաբերյալ: Մասնավորապես, ԶԼՄ-ները եւ սոցիալական ցանցերը անդրադարձել էին Ֆրանսիայի խորհրդարանի երկու պալատների կողմից Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչմանը, Լոս Անջելեսի խորհրդի որոշմանը, որով նոյեմբերի 9-ը հայտարարվում էր ադրբեջանական ագրեսիայի զոհերի հիշատակի օր եւ Շուշիի հետ բարեկամության կարգավիճակի կասեցում՝ «մինչեւ այն չազատվի ադրբեջանական բռնազավթումից»: Սակայն հանրային կարծիքի առաջնորդներից շատերը բավականին արագ սկսեցին հակվել դեպի նման հույսերի անհիմն լինելը: Դա պայմանավորված էր ինչպես ռեալպոլիտիկի սկզբունքների գերակայությամբ, այնպես էլ երկրի ապագայի նոր տեսլականում հաստատված հիմնական քաղաքական ուժերի վարքագծով, որը, ըստ այս հետազոտության «հարցվածներից» մեկի, բնորոշվում էր հետեւյալ բանաձեւով. «Իդեալը կա, բայց այն արդեն Արեւմուտքում չէ»:

Ի տարբերություն «չափավորների»՝ ավելի **արմատական տրամադրված «արեւմտամետները»,** այս կամ այն աստիճանի կոշտությամբ, պատերազմում կրած պարտության պատասխանատվությունը դրեցին Հայաստանի իշխանությունների վրա, որոնք բաց թողեցին ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի հետ մերձեցման հնարավորությունը: Որպես ստեղծված բարդ իրավիճակից ելք՝ նրանք առաջարկում էին անհապաղ դուրս գալ ՀԱՊԿ-ից եւ ԵԱՏՄ-ից եւ վերադառնալ ԵՄ-ի հետ ազատ առեւտրի գոտու համաձայնագրի (DCFTA) օրակարգ: Կարծիք էր հնչել, որ Ռուսաստանը չի կարող որեւէ մեկի դաշնակիցը լինել, քանի դեռ Կրեմլում նստած են կայսերական հավակնություններ ունեցող մարդիկ: Ուստի անհրաժեշտ է մերձենալ ուժեղ երկրների հետ, որոնք դժգոհ են Թուրքիայի եւ Ռուսաստանի մերձեցումից: Ավելին,

Ջո Բայդենի՝ Սպիտակ տուն գալուց հետո ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի միջեւ կապերը կսկսեն վերականգնվել: Հատկանշական է, որ այս կատեգորիան, բացի Արեւմուտքից, Մոսկվային այլընտրանք էր տեսնում նաեւ Իրանը, հատկապես տարածաշրջանում աշխարհաքաղաքական դասավորվածության փոփոխության անթույլատրելիության մասին Իրանի պաշտոնյաների հայտարարություններից հետո, ինչպես նաեւ Հնդկաստանը, որի արտգործնախարարի Երեւան այցին առանձնահատուկ նշանակություն էր տրվել: Այս երկու դրվագները մեկնաբանվեցին որպես ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի հովանու ներքո ռուս-թուրքական տանդեմին հակադրվող պետությունների լայն կոալիցիայի ձեւավորման նշան: Ըստ այդմ, նաեւ այս տանդեմի «3 + 3» (Թուրքիա, Ռուսաստան, Իրան + Ադրբեջան, Հայաստան, Վրաստան) նախաձեռնությունն անհեռանկարային էր բնութագրվում:

«Հարցվածների» կատեգորիան, որն այս հետազոտության շրջանակներում բնորոշվում է որպես «**պահպանողականներ»**, ինչպես լրատվամիջոցներում, այնպես էլ սոցիալական ցանցերում չէին զսպել իրենց՝ ՀՀ իշխանությունների հասցեին օգտագործելու «դավաճաններ», «կապիտուլյանտներ» բնորոշումները եւ նույն սրությամբ էլ գնահատում էին հետպատերազմյան իրավիճակը: Որեւէ մեկի կողմից Հայաստանին աջակցության բացակայությունը նրանք բացատրում էին նրանով, որ աշխարհը ցանկանում է իմանալ Հայաստանի դիրքորոշումը, բայց այն գոյություն չունի: Երեւանը փչացրել է հարաբերությունները բոլորի հետ, եւ բանը հասել է պետությունը կորցնելուն: Ուստի, «պետականության ռեստարտի» համար անհրաժեշտ է Նիկոլ Փաշինյանի շուտափույթ հեռանալը եւ անցումային կառավարության ձեւավորումը: Միեւնույն ժամանակ, ազգային ռեսուրսի վերականգնումը հնարավոր է միայն Ռուսաստանի հետ համագործակցությամբ, որն առաջիկա 5 տարիներին հայերի այլընտրանք չունեցող դաշնակիցն է, քանի որ, գոնե այս ժամանակահատվածում, խաղաղապահներ է բերել Լեռնային Ղարաբաղ եւ այս շրջանի բնակչության անվտանգության միակ երաշխավորն է: ԵԱՀԿ Մինսկի խումբը եւ միջազգային այլ կառույցներ չեն կարող էական ոչինչ անել՝ տարածաշրջանում Մոսկվայի եւ Անկարայի գերակայության պայմաններում:

Հետազոտության այս փուլում շարունակվում էին արձանագրվել մեղադրանքները ՀՀ իշխանությունների հասցեին՝ արտաքին ուժերի հետ կապ ունենալու համար: Ավելի քիչ ինտենսիվությամբ, քան նախկինում, տարածվեց «Սորոսի դավադրության» վարկածը, որն իբր իշխանության բերեց Նիկոլ Փաշինյանին՝ «իր հակահայկական ծրագրերն իրականացնելու համար»: Ամերիկացի բարերարի՝ որպես Հայաստանի «խամաճիկային» իշխանությունների տիկնիկավարի տեղը «պահպանողականների» տարբերակներում գնալով սկսեցին զբաղեցնել Թուրքիան, Մեծ Բրիտանիան, «արեւմտյան լիբերալները»…

Այս հետազոտության շրջանակներում **«փորձագետների»** պայմանական կատեգորիայի կարծիքները պատերազմի ելքի վերաբերյալ հանգում էին հետեւյալ բանաձեւերին. «Պատերազմի արդյունքում Ռուսաստանը տարածաշրջանում իր դիրքերը թուլացրած ռազմավարական դաշնակից Հայաստանի հետ հարաբերություններում ստացավ լարվածություն, սակայն ամրապնդեց հարաբերությունները Ադրբեջանի հետ եւ հասավ դե ֆակտո երկրորդ ռազմակայանի տեղակայմանը Հարավային Կովկասում»: «Եռակողմ հայտարարությունը Թուրքիայի

հաղթանակն է Ռուսաստանի նկատմամբ, որին սառնասրտորեն հետեւում են Արեւմուտքն ու Իրանը»։

Հայաստանում 44-օրյա պատերազմի ընթացքում նկատված անկայունությունը, տրամադրությունների եւ գնահատականների կտրուկ տատանումները Հայաստանում դրսեւորվեցին նաեւ հետպատերազմյան շրջանում։ Դա արտահայտվեց նաեւ արտաքին տարբեր խաղացողների նկատմամբ վերաբերմունքով։ Այս առումով հետաքրքիր են ռուսական «Кавказский узел» ինտերնետ-հրատարակության էքսպրես-հարցումների արդյունքները, որոնցում հարցվողներին պարբերաբար տրվում էր նույն հարցը. «Դժվարության դեպքում Հայաստանը ո՞ւմ վրա կարող է հույս դնել եւ ակնկալել ռազմաքաղաքական օգնություն»։

2020 թվականի հոկտեմբերի 30-ին գրանցված Ռուսաստանի ամենաբարձր ցուցանիշից հետո (79,6%), նախընտրական շրջանում՝ 2021 թվականի մայիսի 18-21-ին այն իջել էր մինչեւ 38,3% (դատելով լրատվամիջոցների ակնարկներից՝ այս միտումը, ամենայն հավանականությամբ, շարունակվել է 2021թ. նոյեմբերի 16-17-ի բախումների ընթացքում եւ դրանից հետո։)։ Ֆրանսիայի դեպքում 2020 թվականի հոկտեմբերի ցուցանիշը (21,3%) աճել է մինչեւ 31,3%՝ 2021 թվականի մայիսին։ Միացյալ Նահանգների ամենաբարձր ցուցանիշը, որը գրանցվել է 2020 թվականի հոկտեմբերի 6-7-ին (27,5%), փոքր-ինչ նվազել է (մինչեւ 23,8%) 2021 թվականի մայիսի 18-21-ին։ Հատկանշական է, որ միջազգային կազմակերպությունները՝ ՄԱԿ-ը եւ նրա Անվտանգության խորհուրդը, Եվրամիությունը, ԵԱՀԿ-ն, գրեթե ոչ մեկի կողմից չեն դիտարկվել որպես Հայաստանի անվտանգությանը նպաստող գործոններ։

Ինչպես երեւում է այս եւ մի շարք այլ ուսումնասիրություններից, հայ հասարակության համակրանքի համար հիմնականում «մրցում» են Ռուսաստանն ու Ֆրանսիան։

Միեւնույն ժամանակ, դատելով ԶԼՄ-ների եւ սոցիալական ցանցերի ուսումնասիրված բովանդակությունից, բարեկամական զգացմունքների հիմք էին դառնում հետեւյալ ընկալումները (բնականաբար, նրանց համար, ովքեր դրանք զգում էին). Ռուսաստանի դեպքում - «Պատմականորեն՝ Ռուսաստանը միշտ էլ եղել է Հայաստանի կողքին», «Ռուսաստանը կանգնեցրել է պատերազմը», «Ռուսաստանը մեզ պաշտպանում է Թուրքիայից», «Ռուսաստանը մեր եկամտի աղբյուրն է». «Ռուս խաղաղապահներն այսօր Ղարաբաղում են»։

Ֆրանսիայի դեպքում դա հետեւյալն է. «Դժվար ժամանակներում Ֆրանսիան մեզ հետ է», «Ֆրանսիան պատսպարել է հայերին իրենց երկրում», «Ֆրանսիան մեզ օգնում է 1915 թվականից ի վեր», «Ֆրանսիան ճանաչել է Հայոց ցեղասպանությունը», «Ֆրանսիան փորձել է օգնել Հայաստանին», «Պատերազմի ժամանակ Ֆրանսիան Հայաստանի կողքին էր», «Մեր երկրների ղեկավարների միջեւ կան դրական հարաբերություններ», «Ֆրանսիան մեզ բարոյական աջակցություն ցուցաբերեց»։

2021 թվականի խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի ընթացքում տեղեկատու խմբի արտաքին քաղաքական պատկերացումներից բխող մեդիա օրակարգի վրա էականորեն ազդել են ինչպես Ղարաբաղյան հակամարտության նորագույն պատմությունը (ներառյալ՝ մեղավորների որոնումը), այնպես էլ ներկայիս մարտահրավերները (ադրբեջանական զորքերի առաջխաղացումը սահմանի որոշակի հատվածներում, ռազմագերիների հետ կապված իրավիճակը եւ այլն)։ Քաղաքական պայքարի սրությունը հանգեցրել էր մատնանշված թեմաների չափազանց ագրեսիվ հռետորաբանության եւ ընտրված տեղեկատու խմբի զգալի մասի տեսակետների բեւեռացման։ Դրան նպաստեց նաեւ այն հանգամանքը, որ ուսումնասիրության օբյեկտ դարձած հայաստանյան հանրային կարծիքի առաջնորդների որոշակի հատված ընդգրկված էր ընտրություններին մասնակցած կուսակցությունների ու դաշինքների ընտրական ցուցակներում։

Նախընտրական քննարկումներն ավելի սրվեցին 44-օրյա պատերազմին առնչվող մանրամասների տարածմամբ, որոնց մասին հայ հանրության մեծ մասը տեղյակ չէր։ Ապրիլին Ադրբեջանից հայկական տեղեկատվական տարածք ներթափանցած «թեժ թեման» համեմատաբար կոնկրետ տվյալներն էին Շուշիում ադրբեջանական զորքերի դեմ «Իսկանդեր» հրթիռների կիրառման վերաբերյալ։ Ադրբեջանական ինտերնետ-ռեսուրսների արգելափակման պատճառով հայաստանյան լսարանի մեծամասնությանը միայն այժմ հասան պատերազմի հենց առաջին օրը հսկայական կորուստների քանակական տվյալները, ինչը հետագայում հաստատեց Լեռնային Ղարաբաղի Անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Սամվել Բաբայանը։

Ընտրությունների համատեքստում «հարցվողների» կողմից ամենաշատ հիշատակված արտաքին դերակատարը եղել է Ռուսաստանի Դաշնությունը՝ մեծապես պայմանավորված Մոսկվայի եւ նրա գլխավորած ՀԱՊԿ դիրքորոշմամբ («սահմանային միջադեպերին» չմիջամտել)։ Հակամարտության մեջ ՌԴ այս դերը ծայրահեղ բացասական գնահատականի է արժանացել։ «Հարցվողների» կատեգորիաները, որոնք պայմանականորեն դասվում են **իշխանությունների կողմնակիցների** թվին եւ, հատկապես, **«արեւմտամետները»** անդրադարձել էին ինչպես Ռուսաստանի գործողություններին, որոնք բացասական հետեւանքներ էին ունեցել Լեռնային Ղարաբաղում եւ հայ-ադրբեջանական սահմանին հետպատերազմյան բազմաթիվ միջադեպերում, այնպես էլ հակամարտությունը լուծելու նախաձեռնություններին։ Մասնավորապես, նախընտրական օրակարգի թեմաներից էր այսպես կոչված «Լավրովի պլանը», որը «արեւմտամետների» կողմից բնութագրվում էր որպես հայ-ադրբեջանական հակասություններն օգտագործելու քայլ՝ Հարավային Կովկասում ռուսական դիրքերն ամրապնդելու համար։ Իսկ անձամբ ՌԴ ԱԳ նախարարի այն հայտարարությանը, թե ներկա պայմաններում տեղին չէ արծարծել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը, սոցցանցերում հաջորդեց արձագանքը Մոսկվայի հակառակ դիրքորոշման հիշեցմամբ. երբ խոսքը գնում էր ռուսական շահերի մասին՝ կապված Ղրիմի հետ։

Միեւնույն ժամանակ, **«պահպանողականների»** կատերգորիայում ներառված «հարցվողներն» ընդգծել էին, որ ոչ ոք չի կարող ժխտել Հայաստանի եւ Ռուսաստանի եղբայրական հարաբերությունները, որ ռուսական խաղաղապահ զորախումբը միակ գործոնն է, որն ապահովում է ղարաբաղցի հայերի՝ իրենց հայրենիքում ապրելու

հնարավորությունը, եւ որ ռուսական խաղաղապահների անժամկետ կարգավիճակը բխում է Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շահերից։

Ի տարբերություն Ռուսաստանի՝ ԱՄՆ-ը եւ Ֆրանսիան, որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի մյուս երկու համանախագահներ, հիշատակվում էին ավելի քիչ, բայց ավելի դրական համատեքստում։ Այդ մասին, մասնավորապես, վկայում են նախընտրական շրջանում «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի կողմից Facebook սոցիալական ցանցի ուսումնասիրության արդյունքները։ Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ներկայացուցիչները Ռուսաստանի Դաշնությունը դրական համատեքստում նշել էին միայն 15%-դեպքերում, մինչդեռ բացասական համատեքստում՝ 49%-ում, իսկ չեզոք՝ 36%-ում։ ԱՄՆ-ի դեպքում այս ցուցանիշները շատ ավելի լավ տեսք ունեին՝ համապատասխանաբար 45%, 6% եւ 49%, իսկ Ֆրանսիայի դեպքում՝ 46%, 6% եւ 48%։ Մասնավորապես, ԱՄՆ-ի դրական հիշատակումները կապված էին 15 հայ ռազմագերիների Ադրբեջանից վերադարձնելու հարցում Վրաստանի ջանքերին նպաստելու հետ։ Ֆրանսիան, մյուս կողմից, դրական գնահատականներ էր ստացել հակամարտությունում Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին ցուցաբերած հետեւողական աջակցության համար։

Նմանատիպ նախընտրական պատկեր է ստեղծվել նաեւ **միջազգային կազմակերպություններին** ֆեյսբուքյան հիշատակումներով։ Ամենից հաճախ հիշատակվում էր ՀԱՊԿ-ը, բայց անբարենպաստ իմաստային հարաբերակցությամբ՝ 5% դրական, 56% բացասական եւ 39% չեզոք։ Համեմատության համար նշենք, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը ստացել է 30% դրական, 5% բացասական եւ 65% չեզոք հիշատակումներ, իսկ ՆԱՏՕ-ն՝ համապատասխանաբար 30%, 0% եւ 65%։ Եվրամիությունը նույնպես դրական հաշվեկշիռ ունի (67%, 5% եւ 28%), բայց շատ հազվադեպ հիշատակման պայմաններում։ Ինչպես ցույց են տալիս բոլոր վերջին ուսումնասիրությունները, հանրային հետաքրքրությունը ԵՄ-ի՝ որպես ինստիտուտի նկատմամբ, չափազանց սահմանափակ է։ CEPA-ի (ըստ էության՝ Հայաստանին տրամադրվող միջազգային աջակցության ամենամեծ ծրագրի) թեման պատշաճ անդրադարձ չի գտել նաեւ քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում, լրատվամիջոցներում եւ սոցիալական ցանցերում։

Հետընտրական շրջանում ներքաղաքական պայքարի սրությունը շարունակեց մեծապես որոշել Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթությունների քննարկումների օրակարգը ԶԼՄ-ներում եւ սոցիալական ցանցերում։ Դրան նպաստեցին Մոսկվայի միջնորդությամբ հայ-ադրբեջանական բանակցությունների ակտիվացումը, Երեւանի եւ Անկարայի միջեւ երկխոսություն սկսելու ջանքերը, ինչպես նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանին պարբերաբար տեղի ունեցող միջադեպերը, ինչպես նաեւ հակամարտող կողմերի միջեւ նոր փաստաթուղթ ստորագրելու պատրաստակամության մասին տեղեկատվությունը եւ Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության հայցերի քննումը ՄԱԿ-ի միջազգային քրեական դատարանում։

2021 թվականի հունիսի 20-ի խորհրդարանական արտահերթ ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հաղթանակը սույն հետազոտության համար ստեղծված տեղեկատու խմբի իր համակիրներին թույլ

տվեց առաջ մղել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հռչակած «խաղաղության դարաշրջանի» գաղափարը: Ընդ որում, կոնկրետ պատճառները այս պայմանական կատեգորիային հիմք էին տվել դատապարտելու Ադրբեջանի ագրեսիվ գործողությունները, քննադատելու Ռուսաստանի կողմից վարվող քաղաքականությունը տարածաշրջանում, մասնավորապես՝ Հայաստանի նկատմամբ:

Միեւնույն ժամանակ, ընտրություններից հետո, «իշխանամետ» «հարցվողները» ստիպված եղան հետ մղել տեղեկատվական հզոր գրոհները միանգամից երկու թեւերից: **«Պահպանողականները»** համառորեն կրկնում էին Փաշինյանին եւ նրա թիմին ուղղված իրենց մեղադրանքները՝ Հայաստանին թշնամաբար տրամադրված ուժերի շահերին ծառայելու համար, պնդում էին պատերազմում պարտված իշխանությունների ներկայացուցիչների կողմից արտաքին աշխարհի հետ ցանկացած բանակցությունների անթույլատրելիությունը: Մտահոգություն էր արտահայտվում նաեւ բանակցությունների բուն թեմայի վերաբերյալ: Մասնավորապես, նշվել էր, որ սահմանազծման եւ սահմանազատման գործընթաց չպետք է սկսել այն իրավիճակում, երբ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ռազմական լարվածությունը պահպանվում է: Իսկ տրանսպորտային հաղորդակցության ուղիների բացման հարցում համոզմունք կար, որ յուրաքանչյուր երկիր՝ ԱՄՆ-ը, Ֆրանսիան եւ Ռուսաստանը, առաջին հերթին հետապնդում է իր շահերը: Ուստի անհիմն էին համարվում հույսերը, որ հաղորդակցությունների բացմամբ Թուրքիան եւ Ադրբեջանը Հայաստանին տնտեսապես զարգանալու հնարավորություն կտան:

Մյուս կողմից, «հարցվածների» կատեգորիան, որն այս հետազոտության շրջանակներում նշված է որպես **«արեւմտամետներ»** (**հատկապես նրանց «արմատական թեւը»**) Հայաստանի իշխանությունների՝ սեփական շահերի պատշաճ պաշտպանության բացակայության պայմաններում Ռուսաստանի եւ Թուրքիայի «դավադրությունը» համեմատել էին Մոլոտով-Ռիբենտրոպ պակտի հետ: Այս կատեգորիայի ներկայացուցիչները իշխող քաղաքական ուժը համարում էին նույնքան ռուսամետ, որքան նրա նախորդներն էին:

Միաժամանակ վստահություն էր հայտնվել, որ ԱՄՆ-ը, Ֆրանսիան եւ Եվրամիությունն ընդհանուր առմամբ պատրաստ են ամեն տեսակի օգնություն ցուցաբերել Հայաստանին, հենց որ նա հայտարարի ԵԱՏՄ-ից եւ ՀԱՊԿ-ից դուրս գալու մասին: Ըստ «արմատական արեւմտամետների»՝ Թուրքիան եւ Ադրբեջանը դատապարտված են, իսկ Անկարայի նկատմամբ Արեւմուտքի ծայրահեղ դժգոհության նշաններն էին նախագահ Բայդենի կողմից «Հայոց ցեղասպանություն» տերմինի օգտագործումը, նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի սառը ընդունելությունը G20-ի գագաթնաժողովում եւ ԱՄՆ-ի կոշտ պատժամիջոցները Անկարայի կողմից ռուսական S-400 համալիրների ձեռքբերման համար: Այս կանխատեսումները հիմնավորվել էին նաեւ Թուրքիայի ֆինանսատնտեսական ճգնաժամի հիշատակումով: «Հարցվածների» այս կատեգորիայի կարծիքով՝ «Արցախի կոսովացումը» կարող է սկսվել Իլհամ Ալիեւի «միլոշեւիչացումով»: Դրան ուղղված առաջին քայլը պետք է լինի Երեւանի պահանջը՝ Մինսկի խմբի հովանու ներքո հավելյալ խաղաղապահ ուժեր տեղակայել նախկին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այն հատվածներում, որտեղ ռուսական զորքեր չկան (Շուշիի եւ

Հադրութի շրջաններում)։ Դրան այս կամ այն ձեւով կհաջորդի Սեւրի պայմանագրի եւ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի իրականացումը՝ վերականգնելով «պատմական արդարությունը» հայերի նկատմամբ։ Եվ այս բոլոր ծրագրերի համար միակ խոչընդոտը Հայաստանի ապազգային իշխանությունն է, որը պետք է հեռացվի։ Հարկ է նշել, որ նման գաղափարները, որոնք կարծես թե լիովին հակասում են այսօր տեղի ունեցող գործընթացներին, ինչպես ասում են՝ «գետնի վրա», բուռն լուսաբանում էին ստանում լրատվամիջոցներում եւ սոցիալական ցանցերում։ Դրանց կրողները առնվազն երկու քաղաքական ուժերի ներկայացուցիչներ էին, որոնք մասնակցել էին 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններին։ Ուստի նրանց ազդեցությունը երկրում հանրային տրամադրությունների վրա չի կարելի թերագնահատել։

Այս հետազոտության նախորդ երեք փուլերից եւ ոչ մեկում իրադարձությունների եւ փաստերի մեկնաբանումը «փորձագետների» պայմանական կատեգորիայի կողմից, որոնք ձգտում էին հանրությանը ներկայացնել տեղի ունեցող իրադարձությունների իրական պատկերը, նման հակասության մեջ չէին մտել մյուս երեք պայմանական կատեգորիաների հայտարարությունների հետ։ Այնուամենայնիվ, դատելով համացանցում տարբեր տեսակի նյութերում հնչող տեսակետներից, դրանք ավելի քիչ են գրավում լսարանի ուշադրությունը, քան հանրային կարծիքի այն առաջնորդների հնչեցրած տեսակետները, որոնք քաղաքական կոնկրետ օրակարգ ունեն։

2021 թվականը նշանավորող երեք իրադարձությունները հատկապես գրավել էին «փորձագետների» ուշադրությունը։ Նախ, սա ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարանի եւս մեկ միջանկյալ որոշումն էր, որը թույլ էր տալիս հույս դնել Ադրբեջանի կողմից հայ ռազմագերիների եւ այլ պահվող անձանց վերադարձի հարցում որոշակի տեղաշարժի վրա։ Ընդ որում, դրան նպաստում էին նաեւ ՄԻԵԴ-ում առկա համապատասխան հայցերը։ Այստեղ կարեւոր է նշել, որ միջազգային երկու դատական ատյաններում էլ Հայաստանը ներկայացված նույն անձով։

Երկրորդը՝ Հայաստանի հրավիրվելն էր ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի նախաձեռնած «Հանուն ժողովրդավարության» գագաթնաժողովին, որը տեղի ունեցավ վիրտուալ ձեւաչափով, 2021 թվականի դեկտեմբերի 9-10-ին։ Բացի Բալթյան երեք երկրներից, հրավիրված էին միայն 4 նախկին խորհրդային հանրապետություններ։ Ինչպես նշել են «փորձագետների» եւ «արեւմտամետների» կատեգորիայի «հարցվածները», այս հանգամանքը «խանդ» էր առաջացրել ինչպես Մոսկվայում, այնպես էլ խորհրդարանական ընդդիմության շրջանում։ ՀՀ Ազգային ժողովում ընդդիմադիր խմբակցություններ ունեցող քաղաքական ուժերի ներկայացուցիչները եւ նրանց հետ նաեւ այս հետազոտության «**պահպանողականներ»** պայմանական կատեգորիայի «հարցվածները» քննադատություններ տեղացին գագաթնաժողովում ելույթ ունեցած Նիկոլ Փաշինյանի հասցեին։ Նրանց կարծիքով՝ պետության ղեկավարը, որն իրեն Ռուսաստանի դաշնակից է հռչակում, չպետք է մասնակցեր այդ միջոցառմանը, որն ուներ ակնհայտ հակառուսական ուղղվածություն։ Հակառակորդների մեկ այլ ճամբարի (**«արմատական արեւմտամետների»**) քննադատական մեկնաբանության էությունը կայանում էր նրանում, որ Հայաստանը բոլորի համար դարձել է

անհուսալի գործընկեր, եւ գագաթնաժողովին մասնակցելը նրա համար իր ռեաբիլիտացիայի վերջին շանսն էր։

«Փորձագետներ» կատեգորիայի «հարցվածները», դրական գնահատելով Հայաստանի մասնակցությունը գագաթնաժողովին, միաժամանակ, Փաշինյանի ելույթն անվանեցին անհասցե։ Օգտվելով այն հանգամանքից, որ Բայդենը չէր հրավիրել Ադրբեջանին եւ Թուրքիային, Հայաստանի վարչապետը պետք է ավելի ընդգծեր այս երկու հարեւանների հետ կապված խնդիրները։

Օգտակար էին նաեւ հայկական լրատվամիջոցների եւ սոցիալական ցանցերի հայկական հատվածի հրապարակումները, որոնք մանրամասն նկարագրում էին բուն գագաթնաժողովի գաղափարն ու օրակարգը։ Միաժամանակ, լրատվամիջոցները եւ սոցցանցերի օգտատերերը, որոնք նախկին իշխանությունների կողմնակիցներն են, ակտիվորեն տարածում էին Չինաստանի ԱԳՆ-ի հայտարարությունը՝ որում վրդովմունք էր արտահայտվում այս միջոցառման առնչությամբ։

Վերջապես, տարեվերջյան երրորդ իրադարձությունը, որն առաջացրեց **«փորձագետների»** հետաքրքրությունը, Արեւելյան գործընկերության գագաթնաժողովն էր Բրյուսելում, որի շրջանակներում Փաշինյանը եւ Իլհամ Ալիեւը երկու հանդիպում ունեցան՝ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի եւ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի մասնակցությամբ։ Հանդիպումներն օգտակար են համարվել, քանի որ դրանք հնարավորություն են տվել կարեւոր պարզաբանումներ տալ երկու կողմերի միջեւ Սոչիում եռակողմ (Վլադիմիր Պուտինի մասնակցությամբ) հանդիպման ժամանակ (26.11.2021) ձեռք բերված պայմանավորվածություններին։

«Փորձագետները» բրյուսելյան հանդիպումը կարեւորել էին նաեւ այն պատճառով, որ ընդգծվել էր, որ նախատեսվող հայ-ադրբեջանական տրանսպորտային միջանցքները (մասնավորապես՝ Մեղրին) չպետք է խախտեն այն երկրի ինքնիշխանությունը, որով անցնում են։ Մեծ նշանակություն ունեցավ նաեւ Շառլ Միշելի հայտարարությունը հայ-ադրբեջանական սահմանի սահմանազծման եւ սահմանազատման գործընթացում ԵՄ կողմից խորհրդատվական աջակցություն տրամադրելու մասին։

Լրատվամիջոցներում եւ սոցցանցերում քննարկում ծավալվեց, թե արդյո՞ք բրյուսելյան հանդիպումը նշանակում է, որ ԵՄ-ն Մոսկվայից խլում է հակամարտության կարգավորման նախաձեռնությունը, թե՞ որ երկու գործընթացները լրացնում են միմյանց։ **«Փորձագետներն»** ավելի շատ հակված էին դեպի երկրորդ տարբերակը։ Բացի այդ, կանխատեսում էր արվել, որ բրյուսելյան հանդիպմանը կհաջորդի եւս մեկ եռակողմ հանդիպում՝ ԱՄՆ-ի մասնակցությամբ։ Մոդերատորների թվի այդօրինակ ավելացումը շատ դրական էր գնահատվել՝ որպես նշան այն բանի, որ աշխարհաքաղաքական կարեւոր դերակատարները՝ ի դեմս Վաշինգտոնի եւ Բրյուսելի, մտադիր են լուրջ դերակատարում ունենալ Հարավային Կովկասի տարածաշրջանում։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության հիմնական նպատակն էր բացահայտել ԵՄ-ի եւ ընդհանուր առմամբ «կոլեկտիվ Արեւմուտքի» նկատմամբ պաշտոնական Երեւանի եւ հանրային կարծիքի վերաբերմունքի դինամիկան: Դա արվել է Ռուսաստանի հետ հարաբերությունների եւ նրա ինտեգրացիոն նախաձեռնություններին մասնակցության վերաբերյալ համապատասխան պատկերացումների համադրմամբ: Ուշադրություն է դարձվել նաեւ այլ ազդեցիկ արտաքին դերակատարների վերաբերյալ հնարավոր անդրադարձներին: Հրապարակումները ԶԼՄ-ներում եւ սոցիալական ցանցերում արված գրառումները եղել են հետազոտության հիմնական աղբյուրները, որոնք իրականացվել են 20 ամսվա ընթացքում՝ 2020 թվականի մայիսի 1-ից մինչեւ 2021 թվականի դեկտեմբերի 31-ը: Հետազոտության թեմայի միտումների էվոլյուցիային հետեւելու համար դրա ժամանակային շրջանակը բաժանվել է չորս փուլի, որոնք համապատասխանում էին երկրի կյանքի որոշակի ժամանակահատվածներին. 1. Հայ-ադրբեջանական սահմանին հուլիսյան բախումներին նախորդող շրջան (մայիսի 1 – հուլիսի 11, 2020) 2. Բախման օրերը եւ դրան հաջորդած զարգացումները ԼՂ-ում 44-օրյա պատերազմից առաջ (հուլիսի 12–սեպտեմբերի 2, 2020), 3. 44-օրյա պատերազմը Լեռնային Ղարաբաղում (սեպտեմբերի 27 – հոկտեմբերի 31, 2020), 4. Պատերազմից հետո իրադարձությունների զարգացումը (նոյեմբերի 10, 2020 - դեկտեմբերի 31, 2021): Հետպատերազմյան զարգացումներն իրենց հերթին բաժանվեցին երեք ժամանակահատվածների՝ հետեւելու համար վերաբերմունքի եւ ընկալումների փոփոխություններին, այնպիսի արտաքին եւ ներքին քաղաքական գործընթացներով պայմանավորված, ինչպիսիք են արձագանքը հրադադարի եռակողմ հայտարարությանը, արտահերթ ընտրություններին եւ խաղաղ բանակցությունների մեկնարկին:

Այս հետազոտության թեմայի՝ հասարակության վերաբերմունքի ու ընկալումների դինամիկան բացահայտելու համար հիմք է ընդունվել հետեւյալ հարցերի լուսաբանումը: 1. Հայաստանի զարգացմանը նպաստո՞ւմ է արդյոք համագործակցությունը ԵՄ/Եվրամիության անդամ երկրներ/ԵԱՏՄ/ՀԱՊԿ-ի հետ: 2. Հայաստանի եւ ԼՂ անվտանգությանը նպաստո՞ւմ է արդյոք փոխգործակցությունը ԵՄ/ՆԱՏՕ/Ռուսաստան/ԵԱՏՄ/ՀԱՊԿ-ի հետ: 3. Ի՞նչ կարելի է սպասել ԵՄ/ՆԱՏՕ/Ռուսաստան/ԵԱՏՄ/ՀԱՊԿ-ից Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում: 4. Որքանո՞վ է CEPA-ն մնում առաջնահերթություն Հայաստանի համար: 5. Ի՞նչ ազդեցություն ունեն ռուսաստանյան ենթակառուցվածքային ընկերությունները («Գազպրոմ», «Հայկական էլեկտրացանցեր», «Ռուսական երկաթուղիներ») եւ ռուսական «փափուկ ուժի» միջնորդները («Ռոսսոտրուդնիչեստվո», «Լազարեւյան ակումբ» եւ այլն) Հայաստանում գործընթացների վրա: 6. Արդյո՞ք ՀՀ ղեկավարությունը հավասարակշռություն ապահովում է արտաքին քաղաքականության մեջ, մասնավորապես՝ ԵՄ-ի եւ Ռուսաստանի միջեւ: 7. Ո՞ւմ (ԵՄ, Ռուսաստան) արձագանքն է քաղաքական իսլամից ահաբեկչության աճող սպառնալիքին առավել համարժեք: Հաշվի առնելով գլոբալ եւ տարածաշրջանային քաղաքականության

փոփոխվող օրակարգը՝ նախատեսվել էր թվարկված հարցերի ձեւակերպումները փոփոխելու հնարավորությունը։

Որպես հետազոտության առարկա՝ օգտագործվել են ընտրված տեղեկատու խմբի համապատասխան հայտարարությունները, հարցազրույցները եւ դիրքորոշումներն արտահայտելու այլ ձեւեր, ինչպես նաեւ լսարանի արձագանքը դրանց։ Փորձագետների (ե՛ւ նախագծում ընդգրկվածների, ե՛ւ այլոց) հետ խորհրդակցությունների արդյունքում այս տեղեկատու խմբում ընդգրկվել են հանրային կարծիքի 32 առաջնորդներ։ Վերոնշյալ հարցերի շուրջ տարաբնույթ դիրքորոշումներն արտացոլելու համար ընտրությունը ներառել է հանրային կարծիքի առաջնորդների չորս պայմանական հատվածներ. ա) նրանք, ովքեր արտահայտում կամ աջակցում են Հայաստանի ներկայիս քաղաքական իշխանության դիրքորոշումները (բնորոշվել են որպես «իշխանամետներ»), բ) նախկին իշխանությունների կողմնակիցները (1998-2018 թթ.), որոնք պայմանականորեն բնորոշվել են որպես «պահպանողականներ», գ) հանրային դեմքեր, որոնք պաշտպանում են «եվրոպականացման», «արեւմտականացման» գաղափարները («արեւմտամետներ»), դ) դիտորդներ, որոնք ձգտում են անաչառորեն մեկնաբանել/վերլուծել գործընթացները («փորձագետներ»)։

Ծրագրի փորձագիտական խումբն արձանագրել է հետազոտության թեմայի վերաբերյալ ամենահաճախակի հնչող կարծիքները՝ այդպիսով որոշելով հասարակության վերաբերմունքի եւ ընկալումների հիմնական միտումները յուրաքանչյուր փուլում եւ յուրաքանչյուր հարցի համար։ Ընտրված/նույնականացված կարծիքները/դիրքորոշումները մշակվել են որակական (վերաբերմունք, ենթատեքստ, մեկնաբանություններ եւ հանրության կողմից համաձայնության կամ քննադատության այլ նշաններ) եւ քանակական (ծավալը, հաճախականությունը, հանրային արձագանքման նշանների քանակը, օրինակ՝ «հավանումները» սոցիալական ցանցերում) մոտեցումներով։ Տեղեկատու խմբի միեւնույն հատվածի առնվազն երկու հանրային կարծիքի առաջնորդների/«հարցվածների» համընկնող հայտարարությունները նյութ են դարձել հետագա ընդհանրացման եւ վերլուծության համար։ Բացառիկ դեպքերում հաշվի են առնվել նաեւ ոչ ստանդարտ, բայց ուշագրավ հայտարարությունները՝ ցույց տալու համար հանրային դիսկուրսի սրությունը։ Կարծիքների, դիրքորոշումների արտահայտման համակարգված հավաքածուն նյութ է ծառայել հետազոտության թեմայի նկատմամբ հայ հասարակության վերաբերմունքի եւ ընկալումների միտումների եւ դինամիկայի վերլուծության համար։ Որպես նախագծի վերջնական արդյունք՝ պատրաստվել է հատուկ զեկույց, որը թույլ է տալիս որոշակի կանխատեսումներ անել հանրային տրամադրությունների եւ քաղաքական օրակարգի հետագա զարգացման վերաբերյալ։

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

www.ypc.am